de la Revue arménienne HANTESS
au Couvent des R.R. P.P. Méchitharistes
à VIENNE
VII Mechitharistingasse 4

ԱՐԵՒԵԼԵԱՆ
ՐԱՄՕՒԼ

ԱԻՍԱՄՍԵԱՑ

ԳԱՁԵՆ ԳՐՈՒԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

1894

ԹԻՒ 8 ՄԱՅԻՍ 1

WIEN 7/2
63
BESTELL
16.5
8-9

ԽՄԲԱԳԻՐ - ՏՆՕՐԷՆ
Մ. ՄԱՄՈՒԻԵԱՆ

ՉՄԻՒՌՆԻԱ
ՏՊԱԳՐ. ՄԱՄՈՒԻԵԱՆ

ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

	Երես	
Գերմանիք	233	ԽՄԲ.
Չէ (Վէյլ)	236	Մ. ՎԱՐՊԵՏԵԱՆ
Քրիստոսուսուր էն Գազգասանաց Կեաներէ Մէկ Քանի Գծերը	242	Յ. Ա. ԱՅՎԱԶԵԱՆ
Իմ Զգացումն	246	Յ. Ս. ԴԻՄԱՔՍԵԱՆ
Մի՛ Մոռնար Զիս	247	Ս. ՓԱՓԱԶԵԱՆ
Լեզուի Խնդիրը	248	Ռ. ՈՐԲԵՐԵԱՆ
Իմ Մանկական Յիշատակներէս	251	Մ. ՆՈՒՊԱՐԵԱՆ
Իմաստասէր Մանկիկ մը	256	Վ.
Լրաբեր	259	ԽՄԲ.
Այլ եւ Այլք	261	Վ. Մ.
Լրաբաղ	263	Ձ.

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Իզմիրի համար տարեկան արժ. մէճ.	3½
» » *վեցամսեայ*	2
Ամ. Պօլսոյ և այլ երկիրներու համար տարեկ.	4
համ 17 ֆրանք. *վեցամսեայ*	2½
Աղգ. վարժարանները համար յիզմիր տարեկ.	2½
դուրսերու համար »	3

ԿԱՆԽԻԿ ԼՍՈՒԵԼ

Ամ. Մամուլ կ'հրատարակէ նաև ծանուցանելիք չափաւոր պայմաններով։

Ոչ և է նամակ, յօդուած ու պրատ ուղղեալ առ խմբագրութիւն ետ չեն դարձուիր։

Ամ. յն բաժանորդներն որ կ'փափաքին ուղղակի ընդունիլ իրենց թերթերն կարող են դիմել առ խմբագրութիւնս իրենց հասցէն որոշակի նշանակելով և միանգամայն տարեդէնն Օսմանեան ԹղթադրոշմՈ ուղարկելով։

Մեր հասցէն,

Խմբագրութիւն ԱՌԱՒԵԼԵԱՆ ՄԱՄՈՒԼՈՅ — Իզմիր

Rédaction d'ARÉVÉLIAN MAMOUL —Smyrne.

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ՏԻՕԵՆԻՍ

GRANDS MAGASINS DIOGENIS

ԿԱՐԵՒՈՐ ԱԶԳ

Պատիւ ունինք ծանուցանել քաղքիս և չրջակայից պատուական Հասարակութեան և մեր բազմաթիւ Յաճախորդներուն, թէ հոս և թէ այլուր, որ անցեալ երկուշաբթի օրուանէն, Ապրիլ 25 է սկսեալ՝ բացուած է մեր ՈՄԱՆՑԻՆ ՄԵԾ ՈՒ ՇՔԵՂ ՎԱՃԱՌԱՀԱՆԴԷՍԻՆ ըլլլլ և մեր տաքսէ զանազան չքնաղագեստներու, փեղկրներու և ձեղակիս յարմար ամեն տեսակ ՆՈՐԱՁՈՒԿՆԵՐՈՒ։

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆՈՐՈՂ ԿԱՐԳԱՒՈՐՈՒԹԻՒՆՆ մեր փոքր քաքանակի բոլոր ճիւղերուն։

Նմանապէս պատիւ ունինք ծանուցանել թէ՝ մեզ ամէն մրցումէն որ երթալով կը ծանրանայ մեր ունեցած տեսակներուն վրայ, որոշեցինք, ամենայանդուգն ձանքով մը, ի վաճառ դնել մեր վաճառատան ամբողջ ապրանքները, առանց զանազանութեան, անհատատալի կերպով ԱՄԵՆԱՑԱԾ գիներով։

Մեր Աբգոյ բազմաթիւ Յաճախորդները կրնան երթալ ապէրով համոզուիլ, թէ ոչ մի ԱՅԼՑԻՆ մեր վաճառատուններուն այցելելով։

Մեր ամբողջ ապրանքներու գիներուն վրայ եղած այս ՄԵԾ զեղչը մինչև այսօր եղածներէն Է՛ւս շա՛տ ԲԱՐՁՐ ըլլալով՝ ալ ուրիշ որ և է յատկութեամբ զեղչ կատարել բացարձակապէս ԱՆՆԱՐԻՒԼԻ կ՚ընէ մեզ համար, մեր գիները նէթ են, ուշ և նշանակի։

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ԱՆԿԼՕ–ԻՍԹԸՐՆ

ԲՕ–ՕԲԼԻԳԱԹԻՕ ԲՕՄԲԱՆԻ, ԼԻՄԻԹԸՏ

Ցրանկաց Ընդ

Տիկի՛ն

Պատիւ ունինք ծանուցանել Ձեզ թէ՝

կառանց վեղարներու

ՄԵՆՔ ՑՈՒՑԱՀԱՆԴԷՍ ՄԸ

կազմակերպած ենք, որ մեծ մասամբ կը բաղկանայ ամենէ նոր, ամենէ վայելուչ և ամենէ հարուստ կաղապարներէն։

Անշուշտ գիտէք, Տիկին, թէ մեր փեղկերներու ճիւղին հակողութիւնը յանձնած ենք տեղւոյս քաջածանօթ փեղկագործուհի Օր. ՄԱՐԻ ՓԱԼԻՍԻՑՆԻի որ միշտ Ձեր տրամադրութեան տակ պիտի ըլլայ փեղկերի, կարնիթիւռի և այլ ամեն տեսակ զործերու համար։

Նոյն ժամանակ այս առթիւն օգուտ կը քաղենք, Ձեզ իմացընելու համար թէ՝ ի մասայ տեղի պիտի ունենայ ԱՄԱՐՈՒԱՆ ԵՂԱՆԱԿԻՆ ՆՈՐԵԼՈՒԿՆԵՐՈՒ ՄԵՐ ՎԱՃԱՌԱՀԱՆԴԷՍԸ։

Ցուսալով թէ պիտի հաճիք Ձեր այցելութեամբը զմեզ պատուել։

Մնանք յարգանօք

ՎԱՐԶՈՒԹԻՒՆ

L'UNION

(L'UNION)

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԱՆԱՆՁՈՒՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀՐԴԵՀԻ ԴԷՄ ՀԻՄՆԵԱԼ 1828 Ի Ն

ԸՆԴԵՐԱԿԱՆ Դրամագլուխ Ե Պահեստի Ֆր. **82,000,000**

ԻՒՆԻՕՆ ապահովագրական ընկերութիւնս նկատելով որ Անգլ. ընկերութիւնները իրենց արդի սակագինէն 30էն 50 0|0 զեղչ մը կ'ընեն, պատիւ ունի ծանուցանելու իւր բազմաթիւ յաճախորդներուն և արդյ հասարակութեան թէ պատրաստ է շնորհել յաւելուածական 20 0|0 զեղչ մը այն գումարին վրայ զոր Անգլ. ընկերութիւնները կ'ատանան իրենց սովորական 30 0|0 զեղչը ընելէ յետոյ։

ԺԱՆ Բ. ՊՕՍԿՕՎԻՋ
JEAN P. BOSCOWICH

Ընդհանուր Դործակալ Զմիւռնիոյ

ՆՈՐ ԼՈՒՍԱՆԿԱՐՉԱՏՈՒՆ

ԳԱՐԼՈ ՊՈՒՀՄԻՃԵԱՆ

Ֆրանկոյ Թաղ, կէ-լմահալլեմ 7,

Սոյն գործատան մէջ մեծ խնամքը և գեղարուեստական յաջողակութեամբ կը շինուին ամէն տեսակ պատկերներ այլ և այլ մեծութեամբ, պատկերաց վերարտադրութիւնք և մեծացնում։ Կը ծախուին ամէն տեսակ լուսանկարչութեան վերաբերեալ մեքենաներ և այլ գործիքներ վերջին դրութեամբ կատարելագործուած։

Փափաղողաց մասնաւոր արուեստախօսութիւնք.

ԴԻՒՐԱՄԱՏՉԵԼԻ ԳԻՆԵՐ

ՀԱՅԿ ՋԱՆԻԿԵԱՆ

ՄԹԵՐԱՆՈՑ ՎԵՐՄԱԿՆԵՐՈՒ

Փոլէ – Իւէ, Ըն- 4, 12 և 14

Կը ծախուին զանազան վերմակներ, անկողնի և բազմոցի համար թէ՛ բամպակէ և թէ՛ յարդէ բարձեր, փետերէր և փոտերէր։ Նաև Ցեղային և Եգիպտական ամէն տեսակ բամպակ թէ՛ մեծ և թէ՛ փոքր քանակութեամբ։

Ապսպրանքի վրայ մեծ հոգածութեամբ կը պատրաստուին զարդարուն վերմակներ հարսանեկան անկողնի համար։

Դասատներէ եկած յանձնարարութիւնք փութով ու ճշտութեամբ կը կատարուին։

ՇԱՏ ՁԱՓԱԻՈՐ ԳԻՆԵՐ

ԱՐԱՆՑ ՀԱՄԱՐ ՈՏՆԱՄԱՆՆԵՐ

Զանազան կաշիներէ, ինչպէս՝ տէվէ տերէ, Ընըրէ, Վէոեչ, ըոտրէն, տոբէն և ամառուան համար գունաւոր կաշիներ։

Ոտնամաններու գինը պիտի որոշուի հագնողին ոտքին թուղին համեմատ։ Ահա ՆՈՐՈՒԹԻՒՆ մը որմէ օգտուիլ կը խրատենք մեր Պատ. Յաճախորդներուն և Արդ. Հասարակութեան, որովհետև՝ այս դրութեամբ՝

0/0 10-15 ՆՈՒՈՁ պիտի վճարեն։

ԳՆԵՑՈՒՑ

Թ- 40 ԵՒ ՓՆՂ 48 — Մ-ՏՒՐ 33 ԵՒ

Կօշիկ Ֆ-ֆ-որ կրկնաներբան	Թիւը	ղրշ	7
Կօշիկ Ըն- »	»	»	6
Պօթ Ֆ-ֆ-որ և Ֆ-ըտ-ոտ	»	»	3 25
Բօթին ու սուրնակաւոր (մանթարլը) »	»		2 75
Պլոքէզ ու » »	»	»	2 75
Կէս պլոքէզ և կէս պօթ	»	»	2 50
Սքարբին	»	»	2 37 1/2
Ռօթին ֆուտ	»	»	3 75

Մնացորդաց վերի ցուցակին գիներէն 1/4 մէճիտ պակաս։

Ոտնամաններ ի Տարկին 24 ժամէ կը յանձնուին,

Աժուրթիւն, դիմացկունութիւն և ճաշակաւոր ձեւաւորութիւն։

ՎԵՐՋԻՆ ԳԻՆ ԿԱՆԹՈՒԿ

Աչէ Նըրէէ ԵԿԵղեցոյն Ռէճ պրան մօտ, Ըն- 47

ԱՄԱՍ ՊՕՂՈՍ Կ. ՕՀԱՆԵԱՆ

Ս· ՍԻՎՐԻՍԱՐԵԱՆ ԵՒ ԸՆԿՔ

ՍԵՓ ԳՈՒՆԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Սոյն հաստատուոր վաճառատունն՝ ուր կը ծախուին դանազան բամպակեղէն, բրդեղէն, մետաքսեղէն նիւթեր, վաղուց կը վայելէ ոչ միայն Իզմիրի ամեն հասարակութեանց համաձայնութիւնը, այլ և իր բոլոր գաւառային յաճախորդներուն վստահութիւնը որ արդէն քալ գնահատած են իր ապրանաց ընտրութեան, տոկունութեան, լաւութեան, չափերու ճշտութեան և գիներու անհամեմատ չափաւորութեան զգալի առաւելութիւններն, այնպէս որ միշտ գոհ մնացած և սոյն վաճառատունը պատուած են իրենց յանձնարարութեամբ։ Ինչպէս ցարդ նոյնպէս և այսուհետև Սիվրիսարեան վաճառատունն պատրաստ է մինչոյն դիւրութիւններն ընծայել տեղւոյս յաճախորդներուն, և յատկապէս գաւառացոց ուշադրութիւնը կը հրաւիրէ վերոյիշեալ առաւելութեանց վրայ։ Պարտին վստահ լինիլ թէ իրենց յանձնարարութիւնները գրով կամ գործակատարներու միջնորդութեամբ, ամենայն ճշտութեամբ ու փութով պիտի կատարուին։ Ընտրակոյս գաւառացի և տեղացի նոր յաճախորդներ պիտի փութան, անձամբ դիմելով փորձել, ապրանաց գերազանցութիւն, Սիվրիսարեան ընդարձակ մթերանոցներու մէջ՝ որ կը գտնուի՝

Ա.չէ – Եօրիւէ խաղնակի ֆոլլոչէ մեծ վեզիր խանի օպոզիս։

LIBRAIRIE FRANÇAISE & ANGLAISE

Կէ-ֆլիւէ, 0 Պէն-Մարչէի ֆէռմայի ֆոլլոչէ

Պատիւ ունիմ ծանուցանել քաղաքիս Հայ ընթերցասէրներու թէ՝ վերջերս ստացայ հետևեալ գրքերը՝

Ֆերտիք Մասօն — Նաթալէօն Է լէ ճամ
Փէռ տը Ք Օվեր — Գրանտ Է Ռուսի
Ֆեկամօ Սալօն 1894 — Արմէ Լիւս
Ճաճկ Ֆիկամօ Սալօնի 1894
Բ. Պուրժէ — Քոզմոբոլիս (Գէռ 1 Հեյ)
Նոր տպագրութիւն պատկերազարդ

ԱՍՏՂԻՆ

ԿԻՍԱՄՍԵԱՅ

ԿԳ. ՏԱՐԻ

ԹԻ 8 — 1 ՄԱՅԻՍ 1894

ԳԵՐՄԱՆՔ

Գ

Աւստրիական հին պրոթեսթանտ հետքը դեռ կ'երեւի ի Գերմանիա։ Ի զուր փորձեր եղան հողային սեպհականութեան հին օրէնքը վերանորոգել. հաւանական չթուիլ այդ փոփոխութիւնը մօտալուտ ապագայի մը մէջ։ Թէեւ գերմանք մարդասէր են բնաւորութեամբ, այլ յանկարծական վերանորոգման անընդունակ. տակաւին պարզ տեսագէտներ են։ Մեծ հողատէրները գլխաւորապէս կը գտնուին Բրուսիոյ արեւելեան և արեւմտեան կողմերն, Սիլեզիա, Պրանեպուրգ, Բոմերանիա և Մագդեպուրգ։ Դիւղացի կալուածատէրներ սակաւաթիւ են։ Ջկայ թէեւ արգելք հողային փոխանցման, սակայն հողերը մեծ մասամբ աշնուական դասակարգին ձեռքն է, հետեւապէս և

ժառանգական։ Վերջերս Էօժ. Ռիյհդեր, նշանաւոր աղատական քաղաքագէտն, Ռայխսդագի մէջ անդրանկութեան իրաւանց փոփոխութեան պէտքն զգացուց՝ իբրև օգտաւէտ՝ տնտեսական տեսակէտով, բայց որքան որ աղնուականներն հակամէտ էին հին դրութեան հիմերը պահելու, կ'փափաքէին նաև որ մանր հողատէրները չատնան մեծերուն չուրջն որպէս զի լաւ երկրագործներ յառաջ գան։

Պ

Արդի դիւանապետն ըսաւ — «Պրուսիոյ տէրութեան մէջ տնտեսներն են»։ Տարակոյս չկայ որ դերմանք օրէ որ ճարտարական աղգ մը կ'դառնան։ Թէև այժմ առուտուրն ընկած է հարկահանական դրութեան և մաքսային տրոց պատճառաւ, սակայն ճարտարական արհեստներն ծաղկած վիճակի մէջ կ'գտնուին։ Ինքնին բուն դերմանական ճարտարագիտութիւն չկայ, բոլոր առուտուրները քիչ շատ ներկայացուցիչներ ունին։ Եթէ կայ ճարտարութիւն մ'որ միւսներէն գերազանց կրնայ նկատուիլ, այս է երկաթագործութիւնն և մեքենական գործերու ճարտարութիւնն։ Էսէնի մէջ Քրուբի տիեզերահռչակ գործարանն, որ մինչև 1885 երեսունչորս զանազան տէրութեանց 20,000 թնդանօթ մատակարարեց, առաջնակարգ դիրք մը կ'բռնէ, և բաց ի հրացէնէ, Քրուբի գործատունն երկաթուղւոյ ձողեր և մեքենաներ կ'դարբնէ։ Քրուբեան բովերն ամեն ամիս 10,000,000 քիլօկրամ երկաթ կ'արտադրեն։ Գործարանին մէջ մօտ 12 հազար բանուոր կ'աշխատին։ Ուրիշ կարևոր հիմնարկութիւն մ'է կրուզոնի թափծու երկաթեղէնն ի Պուքաու։ Ոչ նուազ նշանաւոր է երկաթուղիներու թագաւորն Պաուօն Ֆոն Շդումմ որ Նօյնքիրչէն երկաթի գարբնոցներու տէրն է և. Պիզմարք իշխանին պաշտպանողական քաղաքականութեան սատարն։ Իսկ արհեստական ելեկտրականութեան մէջ հռչակաւոր են Երնսդ Վէրներ Ֆոն Սիմէնս եղբարք։ Այս ճիւղին նկատմամբ այնքան բաւուն է չա-

համբաւութիւնն ի Պերլին ոչ մանաւանդ տանտէրները անդամ պիտի յայտնէին մօտերս իրենց տուներն ելեկտրականութեամբ լուսաւառել շատ աժան գնով։ Հայկերթութիւնն ևս շատ տարածուած է մանաւանդ ի Սաքսոնիա։ Աննման համեմատութիւններ ստացած է նաև Դրէսդինեան յատկապէս բուսային Թելերու* կիրառութենէ ի վեր։ Մինչև 1840 ձեռքն էր որ կ'գործէր թուղթն. այնուհետև մեքենան սկսաւ գործել և Գերմանիա շատ աւելի թուղթ կ'չինէ քան հիւսիսային Ամերիկա, այս է 244 միլիոն քիլօկրամ՝ 1878 ին։ Հէսսական ճարտարութիւնն ևս մեծ կարևորութիւն ստացած է։ Բրէֆֆելտ մետաքսի և թաւշի տարազագործութեան կեդրոնն է։ Սիլեզիայի գլխաւոր ճարտարութիւնն է կտաւէղէնն։ Բոլոր Գերմանիոյ մէջ տարածուած է ընդհանրապէս ձեռակերտ հիւսուածն ու մանածն, մինչդեռ հիւսիսային երկիրներն աւելի մանարանները կ'գտնուին։

Հարկ է յիշել նաև Նուրէնպէրգի խաղալիքներու հանրածանօթ ճարտարութիւնն, իսկ Խեմնից, ի Սաքսոնիա, անուանի է իր գործիներու և մեքենաներու կողմէ։ Գոբելէնային ճարտարութիւն, միշտ Գերմանիոյ յատուկ ճարտարութիւն մը, այս վերջին ժամանակներս արտասովոր ընդարձակութիւն գտած է՝ մանաւանդ ի Պավարիա։ Գարեջրական արուեստի համար դպրոցներ հիմնողն առաջինն եղաւ Գերմանիա, երբ տեսաւ որ այդ գործին համար յատուկ մանագէտներ կարևոր են։ Առաջինն 1848 ին հաստատութիւն գտաւ ի Շայհհայմ։ Մունիխի և Պերլինի համալսարաններու, ինչպէս նաև երկրագործական վարժարաններու մէջ դասեր կ'աւանդուին գարեջրի չինութեան վրայ։ Պերլին և բոլոր գերմանական քաղաքներու մէջ համեմատաբար շատ գարեջուր կ'սպառուին քան միւս բոլոր եւրոպական մայրաքաղաքներն։ Բայց

---

* Cellulose — փայտի թելերու էական տարր· սպիտակ, անլոյծ, բաիանցիկ նիւթ մը։

գերմանական գարեջուրն այնքան արբեցուցիչ չէ որքան անգլիականն։ Ի Պերլին մարդ դլուխ տարին 160 լիտրէ գարեջուր կ՚ոպառի, ի Մունիխ 566։ Հետզհետէ դիտուելիւն կ՚դառնայ գարեջրի չինութիւնն և բարեկիրթ ընտանեաց անդամները այլ արհեստը սորվելու չեն դժկամակիր։

(Շարաւնակելի)

ԶԷ՛

ՎԻՊԱՆ

Ա

Տրամութիւնը տեսակ մը անուշութիւն կուտար Լօրիի սիրուն դէմքին, իր մեծ ևւ աչքերը բան մը ունէին իրենց մէջ, համակերպութեան մեայլ մ՚որ կը ծածկէր՝ բայց անկատար կերպով՝ ներքին պայքարները։ Լօրի չէր այն աղջիկներէն որ մեղամաղձոտ խօսքերով, թոյլ յուսահատ ձևերով կը սիրեն ուրիշները իրենցմով զբաղեցնել, ուշադրութիւն գրաւել, փայփայուիլ։ Լօրի տխուր ըլլալու իրաւունք ունէր։ վարժուհի եղած էր հիմա՝ ինքը որ հինգ տարի առաջ վարժուհիներ ունէր մասնաւոր, Որը էր խեղճը, իր հայր՝ կաթուածահար՝ մեռեր էր մեծ սնանկութեան մը ղոհ, ու մայր չուներնալով արդէն ու չուզելով ալ աղգականներու բեռ ըլլալ որոշեր էր ինք իր աչխատանքով ապրուստ ճարել, կեանքին հետ մաքառիլ, հաստատ միտքը դրած ղիմադրաւելու ինչ որ բաղդը վերապահած էր իրեն ու վերջապէս՝ քանի մը տեղ փոխելէ ետք՝ հաստատուած էր Սահակեաններու տունը ուր պզտիկ Հրանուշին հայերէնի, ֆրանսերէնի ու դաշնակի դասեր կուտար։ Տիկին Սահակեան չուներ իր միջև այն օր ճանչցած քանի մը մայրերու անմարդավար կերպերը, ունայնամտութիւնը, դուռդուրթիւնը որ սովորաբար հարուստ կամ վերջէն հարստացած անձերու թերակիրթ ու երեսին տգէտ կիները կ՚ունենան։ ընդհակառակը Տիկին Սահակեան, բարի ու բանիրուն կին, ըմբռնելով Լօրիի հոգեկան վի-

ճակը շատ վախկոտութեամբ կը վարուէր հետը ու իրրև իր հասասարը կը նկատէր զինքը, հետևաբար գոհ էր Լօրիէ։

Սակայն, խեղճ աղջիկը ունէր օրեր որ կը յիշէր իր հայրը, մայրը, իրենց չքեղ տունը, բարեկամները, հիւրերը որ կուգային դիրենք տեսնելու, պարահանդէսներն ուր ձեռքէ ձեռք կը խլէին զինքը, թեկնածուները որ՝ թիթեռներու պէս՝ կը թռչտէին իր շուրջը, հագուստները՝ որ ամենու հիացում կը պատճառէին, ու սիրտը կ'ելլէր, առանձին լալու փափաքով մը կը տանջուէր։ Երազ էին բոլոր այս բաները հիմա։

Բ

Գիրք մը ձեռքը վարժուհին — բայց, չէ՛, Լօրիէ շատ անուն չունի հերոսուհիս — Ուսոի Լօրի կը չրջէր սենեակին մէջ, գըլխիկոր ու մտախոհ, իր սև օրերէն մէկն էր, ու պզտիկ Էրանուհին համար գաս մը կ'ուզէր պատրաստել՝ բայց չէր կրնար, գիրքը կը բանար, կը թղթատէր, կը գոցէր նոյն բանը կրկնելու համար տաս անգամ, առանց արդիւնքի։

— Ինչ ունիմ այսօր նորէն, ըսաւ ճակատը սեղմելով, խելքս գլուխս չէ . . . ա՜խ Սերոբս, Սերոբս . . .

Սոյն վերջի բառերը քիչ շատ լսելի ձայնով մը արտասանուեցան սէ Սերոբ Սահակեան որ մեծ թիկնաթոռի մը վրայ քաշած կէս–օրուան պզտիկ քունէն նոր արթնցեր էր ու կռնակը դարձուցած ըլլալուն չէր տեսնուէր « ո՞վ է » ըսաւ ներդաշնակօրէն յօրանջելով ու անմիջապէս ոտք ելաւ, « օրիորդ Լօրի » . . . յարեց։

Լօրի ետ քաշուեցաւ, չփոթած, կարմրելով։

— Ներ . . . ներեցէք . . . պարոն Սերոբ, թոթովեց, կը կարծէի թէ . . . մինակ եմ . . . ձեզի անհանգիստ ըրի։

— Այժմեւին, հոգ չէ, մինակ ենք, ըսաւ Սերոբ տարբեր չեշտով մը և ուշադիր նայելով Լօրիէն որ երթալով աւելի կը շփոթէր։

Լօրի չի պատասխանեց։

— Մի վրդովիք, օրիորդ, վրայ բերաւ Սերոբ խօսքը փոխելով, արթնցեր էի արդէն, կարդալու առենս քունս տարեր է, ի՛նչ կ'ըսէաք մարդ մեր թերթերէն, բոլոր անքունութիւն ունեցողները թող կարդան Ազնէլլ, Հայրենիք, Ծագիկ, Ազնէլեան Մօ՜ր, Մօ՜րս մանաւանդ Մօ՜րս . . . ։

— Շատ . . . խիստ է՛ք . . . համարձակեցաւ ըսելու Լօրի որ կամաց կամաց ինքզինքը կը գտնէր։

— Կարծիք, պարզապէս կարծիք, օրիորդ։

Ու Սահակեանի այս թեթեւամիտ որդին բոլոր մեր պատուական թերթերը մէկ ջուրով լուալէ ետև դուրս ելաւ։

«Սերոբս, Սերոբս ա՛խ . . . ըսաւ ինքնիրեն, «ի՞նչ կը նշանակէ ասի, Սերոբ, եթէ չեմ սխալիր, ես եմ, Սերոբս ա՛խ . . . բայց պարզ է բացատրութիւնն այս աղջիկը ինծի համար . . . ա՛խ . . . կը քաչէ, հիմա կը հասկնամ թէ ինչու սեղանին վրայ նայուածքներ կը ձգէ վրաս, հիմա կը հասկնամ թէ ինչու հետս խօսած առենը գոյն կ՛առնէ գոյն կուտայ, վայ միամիտ աղջիկ, վերջապէս ինքզինքը մատնեց, բայց ան չէ՞ր գիտեր որ ես սենեակն էի . . . ա՛խ . . . ըսած առենը . . . անպատճառ գիտէր . . . նպատակով մ՛էր ուրեմն . . . ի՛նչ յաւակնութիւն, քոյրիս վարժուհին ինձի սիրահարի՞ ան ով, ես ո՞վ, ես Սահակեան մը — ու Սերոբի դէմքը մեծկակ արժանապատուութեան մը խոժոռ արտայայտութիւնը առաւ — իսկ ան . . . վարժուհիի կոր մը խեղճ ու կրակ . . . դիրքի մելանի ծառայ, և սակայն ինչ անուշ ձայնով արտասանեց անունս . . . կարծես կոր մ՛էր որ սիրտէն բրդաւ . . . ճիշդ վարժուհիի մը՝ որ իր դաս տուած աղջկան եղբայրին կը սիրահարի և չի համարձակիր բան մ՛ըսել՝ ձայնն էր։ բայց ի՛նչ յաւակնութիւն և սակայն ի՞նչու . . . աւելն մարդ սիրելու իրաւունքն ունի . . . ու եթէ այս աղջիկը դիս կը սիրէ առաջինը չէ և ոչ երկրորդը։ ըսել է ճալակ ունի— հոս ժպտեցաւ Սերոբ, չեմ գիտեր ինչու — ճիշդը սիրուելէ ձանձրացած եմ ալ . . . Սերոբս, ա՛խ, . . . մարդուս դէմքը կուգայ . . . վայ Լօրի, վայ . . . դուն ալ ընկար հա՛ . . . քանի մը օրէ Պեռթին հետ կուտու եմ . . . ուստի յարմար առեն եկաւ Լօրին . . . քիչ մը հետը ժամանակ կ՛անցուընեմ . . . անփորձ ալ ըլլալ պէտք է, ուստի քիթէն բռնելը դիւրին . . . պզտիկ սիրուն խաղալիկ մը որու բարակ կլորիկ թուչը մինակ ինչ ըսես կ՛արժէ . . . »։

Սերոբ այդ օրէն սկսաւ իր բոլոր ուշը Լօրիի վրայ դարձնել, անոր հաճելի ըլլալու ամեն ճիգ կը թափէր, փութկոտ էր անոր մօտ, իր նայուածքներն նշանակութեամբ լեցուն էին։ իր խօսակցութեան մէջ տաք չեչտեր կը դնէր, գիտէր որ Լօրի՝ գրքանսական թերթերէ կ՛ախորժէր, ուստի երբեմն հետը քանի մը հատ կը բերէր, իսկ Լօրի զգայ դիրք մը կը պահէր, ծանր էր իր

վարմունքը ու կ'աչխատէր կարելի եղածին չափ Սերոբի ներկայութենէն խոյս տալ, գրեթէ միշտ՝ բան մը պատրուակելով իր սենեակը կ'երթար երբ միևնակ մնային երկու հոգի, «խեղճ աղջիկը կը հալի, ըսաւ Սերոբ ինքնիրեն օր մը, պէտք է խաղայ դադրեցուենեմ, կարելի է յոյսեր ընէ, իրաւ, բան մը չ'կրմ ըսած իրեն, բայց ինչ պէտք . . . թէև յանցանքը իմս չ'է, ինքը պատճառ տուաւ, պէտք է վերջ մը տալ այն գործին . . . արդէն Պետրոն ալ նամակ մը գրեր է որ անպատճառ այս իրիկուն երթամ զինքը տեսնելու . . . սատանայ կնիկը . . . կարծեց թէ Սերոբը ուզածին պէս կրնայ քշելու, ան սատանայ բայց ես աւելի սատանայ . . .

Բայց ադ սատանայ Սերոբը (իր ածականով) Պետրոին չի գնաց այդ իրիկուն և ոչ ալ հետևեալը, քանի մը օրուան համար գիւղը հրաւիրուեր էր բարեկամէ մը ու մերժեր էր առանց հասկնալու թէ ինչու, որովհետև ամեն տարի չատ զուարճալի ժամեր կ'անցուներ այդ գիւղը իր բարեկամին հետ, ու հիմա պատրոյտի ալ չէր ելներ ստէպ կը սիրէր տունը մնալ ու Լօրիի հետ խօսակցիլ ու բաւական տարակուսելէ, ինքզինքին հետ վիճելէ ու վարանելէ ետքը՝ կամաց կամաց հասկցաւ թէ Լօրին պէտք մը դարմեր է իրեն. կը սիրէր զինքը։

Օ

Այո՛, Սերոբ կը սիրէր Լօրին, Լօրին որու ամիս մը առաջ ուշադրութիւն անգամ չէր ըներ. կը սիրէր, ալ տարակոյս չըկար, ու իր սէրը կ'աւելնար օրէ օր. հիմա աւելի լուրջ էր Լօրիի հետ, քիչ մ'ալ վեհերոտ, ու ներքուստ կը սրդոզէր երբ Լօրի առանց հուրի, առանց զգացումի՝ հասարակ տափակ նիւթերու վրայ խօսէր անտարբեր ձևով մը, կը ցաւէր մանաւանդ երբ Լօրի քովէն երթար ու միևնակ ձգէր զինքը, «ի՞նչու կը փախփախի», կ'ըսէր ինքիրեն այն ատեն, «բայց բնական է . . . քոյրիս վարժուհի . . կը քաշուի . . . կամ նպատակ մ'ունի ու վարպետութիւն է ըրածը . . . թերևս կ'ուզէ որ աւելի սիրահարուիմ իրեն . . . կիները հազար տեսակ հաշիւներ կ'ընեն . . . և սակայն ես չատ կին ճանչցած եմ, պզտիկ աննշան Լօրիէ մը յաղթուելու համար . . . եթէ այդ դիտաւորութեամբ կը փախփախի ու ծանրէն կը քաշէ . . . ինչ ըսեմ . . . կ'դիմամ իր վրայ . . . բայց . . . լրջօրէն մտածենք . . . ինչ կ'սպասեմ այս

աղջիկէն . . . կ'սպասեմ որ . . . ի՞նչ . . . Թէ դիս սիրելը բռնանովը խոստովանի . . . բայց ատի բնականի դէմ է . . . , մանաւանդ Լօրիի համար, իր ներկայ դիրքին մէջ աննկրելի, . . . արդէն ինծի հետ խօսած ատենը արագ չունչ առնելը ու ձայնին քիչ մը դողդղալը խոստովանանքներ չե՞ն . . . ուստի պէտք է որ ես բացուիմ իրեն . . . և սակայն իմ ձևերս վարմունքս ալ բաւական պերճախօս չե՞ն, իմ ձայնս ալ, ի՞նչ խոբեմ ինքզինքս, կ'երերայ կոր հետը տեսնուած ատենս . . . չէ՛ պիտի սպասեմ դեռ »։

Սակայ՝ այսպէս կը խորհրդածէր Սերոբ և սակայն իր կուրծքին մէջ բան մը կար, ըղձանքի հետ խառնուած ցաւի մօտ տարտամ բան մը որ կը ճնշէր, անհամբեր կ'ընէր դինքը, կ'ուզէր համարձակ խօսիլ Լօրիի հետ, կ'ուզէր դուրս թափել իր սիրտը, եթէ ներելի է այսպէս ըսել, ու քիչ մը թեթևնալ։

Պ

Կիրակի մը Սահակեանները պտոյտի ելած էին, Սերոբ տուն էր մնակ, ընթերցասենեակին ուր՝ սեղանին վրայէն դիրք մը առաւ պատահարար. Լօրինն էր այդ դիրքը զոր թղթատելու ատենը կանգ առաւ, իր ամրողջ էութիւնը երանութեան սարսուռով մը ցնցուելով, ոտանաւոր մը կար այդ դիրքին մէջ՝ թուղթի կտորի մը վրայ Լօրիի գիրով գրուած ու վերնագիր ունենալով՝ « Սերոբիս », իսկ ոտանաւորը ահա,

Սեւ վայրուն մազերդ, մութ ակռերդ աղուոր
Վիշտով լեցուցին հոգիս սգաւոր,
Վիշտը զոր կ'առթէ կարօտ մը ճնշող,
Կարօտը սիրուած ումնիկ հեռաւոր։

Ձայնդ հեշտօրօր ուրի շիթեր լոյս՝
Որ կը կայլակեն դառնութեան մէջ յոյս,
Պէտք ունիմ ձայնէդ, պէտք ունիմ բեզմէ,
Ջի ժպիտն իզմէ ապիտս կուտայ խոյս։

« Զարմանալի բան », ըսաւ Սերոբ, « եթէ իզմէ պէտք ունի . . . ինչ կը նշանակէ իր վարմունքը . . . բայց կը քաշուի . . . բնական է . . . վայ չարաճճի աղջիկ, մազերս ու աչքերս . . . հա՞ . . . տեսնենք վերջին տունը,

Թէ գայիր ինծի ըսելու, Լօրի,
Հոգիս բու հոգւոյդ պէս կը տոչորի,
Երթանիկ աննաւար, անապատ երթանիկ
Մեր սէրն ապրելու, կ'ըսէի, բարի։

«Վերջապէս, վերջապէս», ձայնեց Սերոբ, խանդավառ, գոհայ գաղտնիքը, գոհայ, կ'սպասէ որ ես բանամ սիրտս իրեն բայց յայտնի բան էր, ինչ ապուշ եմ եղեր, պարապ տեղը տանջեցի Լօրին, իմ խեղճ պզտիկ հրեշտակս, բայց աղուոր է ոտանաւորը, «սև փայլուն մազերդ» հապա ձայնիս վրայ ըսածը, «ձայնդ հեչտօրօր ունի չիթեր լոյս» պարզապէս հրեշտակ մ'է այս աղջիկը, սիրոյ ճշմարիտ գանձ մը, ալ չեմ կրնար դիմանալ, պարապ տեղը այսքան ատեն . . . ի՛նչ աւանակ եմ եղեր . . .

Լօրի մտաւ այս պահուն լսելու համար «աւանակը» զոր Սերոբ՝ սիրով և ուրախութեամբ գինովցած, բարձրաձայն արտասաներ էր ու հիմա Լօրին տեսնելուն անոր քով վազեց ու անոր ձեռքերէն բռնելով,

— Լօրի, կը սիրեմ քեզի, ըսաւ գորովալի ձայնով մը որ կարծես պիտի աւրուէր նոյն պահուն։

Լօրի ետ քաշուեցաւ, խռոված, յուզմունքէն չէր կրնար խօսիլ, կը հևար . . .

— Լօրի, հրեշտակս, կը պաշտեմ քեզի, կ'ուզե՞ս կինս ըլլալ, յարեց Սերոբ, պաղատող ձայնով մը։

Լօրի Սերոբի ձեռքերէն պրծելէ ետև, ակներև ճիգով մը ինքզինքն ամփոփեց պահ մը ու խստութեամբ,

— Չէ՛, ըսաւ։

Տասարի պէս կտրող էր այդ «չէն»։

— Ի՞նչպէս Լօրի . . . հեկեկաց Սերոբ ինքիրմէ ելած ու ըսածը ալ չգիտնալով, գիտեմ, գիտեմ որ կը սիրես զիս . . . ահա ոտանաւորդ . . . ըսէ, կ'ուզե՞ս . . .

— Չէ . . . ընդմիջեց Լօրի, ոտանաւորը Սերոբին ձեռքէն խլելով, այս ոտանաւորը՝ զոր կարդալու իրաւունք չունէիր՝ ուրիշ Սերոբի մը համար գրուած է, ես արդէն նշանուած եմ Սերոբի մը որ գործով Պոլիս կ'գտնուի . . .

Ու Լօրի սենեակէն դուրս ելաւ զայրացած՝ իր կեանքին մէջ առաջին անգամն ըլլալով ու դողալով ամբողջ մարմինովը։

— Ափսո՛ս, հառաչեց Սերոբ իր դէմքը պահելով ձեռքերուն մէջ, երբ միևնակ մնաց։

Խորէն, չատ խորէն բրդաւ դուրս սլացաւ այս ափսոսը։

Փետրուար, 1894 ՄԻՀՐԱՆ ՎԱՐՊՈՑՏԱՆ

ՓՐԻՍՏՈՍՏՈՒՐ ԷՖ. ՂԱԶԱՐՈՍԵԱՆԻ

ԿԵԱՆՔԻ ՄԷԿ ՔԱՆԻ ԳԾԵՐԸ

Կեանքեր կան, որոց մասին որչափ չատ գրուին, այնչափ աւելի կ'արժեն ու կը գնահատուին։

Գերեզմանը չատ անգամ մեռելոց վաստաբանը ու պատմագիրը եղած է։

Եւ Փրիստոստուր չէր նմանէր Զենոնին, որ 40 տարիներէ յետոյ փիլիսոփայութեան հարթաւ առաւ, ժան ժաք Ռուսօյին՝ որ 40 էն աւելի տարիներէ յետոյ սկսաւ ճանչցուիլ, ինչպէս նաև Վօլթէռին, որ 50 տարեկան եղած ատեն բարձրագոյն գնահատութեան արժանացաւ։

Փրիստոստուրի համբաւը դպրոցական չրջանէն սկսաւ, և անկէ ետքն ալ՝ ոսկերչական չուկային մէջ չի սահմանափակուեցաւ։ Երիտասարդական թարմ հասակին մէջ իւր մէկ ոտքը դրած էր դպրոցի սեմին վրայ, միւսը՝ Գըզլար — աղասի խանը կամ Ջինճիրլի խանը։

Սամաթիացին պէտք է լաւ չիչէ այս կրթական վէտէրանը, որու կենաց մէկ մասն գրած և հրատարակած եմ արդէն։

* * *

Կուգամք այժմ ի գիր արձանագրել իւր կենսագրութեան անտիպ մնացած մի քանի մասերն ևս, յուսալով որ, հարիւրաւոր աչակերտացը սրտին մէջ թերևս երախտագիտութեան զգացումը յառնելով մի օր, ի Պալըքլը փառաւոր դամբարան մը կառուցուի իւր գերեզմանին վրայ։

Ժամանակակից Սամաթիացին անշուշտ կը չիչէ 1852 ի՞ն, թէ 54 ին ատեններըՍ. Գէորգ եկեղեցւոյն դիմացը, ուր այսօր «Պալըգհանէ խանթարճիսի» Սըչան Մանուկի՝ տունը չինուած է, մեծ նպարավաճառատուն մը բացաւ Ղազարոսեան Փրիստոստուր էֆէնտին, և իր ազգականներէն՝ Մխիթան աղա անուն մէկու մը յանձնելով անոր տուր և առը, առաջին Հայ նպարավաճառի խանութ բացողը համարուեցաւ, որու հետևեցան, Պա-

գալ—Յովակիմ և իր եղբայրը՝ ի Բէմէր—Ալթը, և անտի ցարդ ուրիշներ ևս։

Իսկ ինքը մինչև վերջ՝ գրեթէ անուանական կերպիւ չարունակեց իր ոսկերչական գործը, առանց երբէք քաշուելու Պատրիարքարանի կողմանէ իրեն յանձնուած գործերէն։

Ի մէջ այլոց, 1859 ին նոր Տնտեսական ժողով մը կազմուեցաւ 26 անդամներէ բաղկացեալ։ Այս ժողովոյն անդամակիցներէն էր նաև Ղազարոսեան Քրիստոստուր էֆէնտի։

1870 Դեկտեմբեր 21 էն սկսեալ՝ առեներպետաց բացակայութեան առեն, առաժամեայ առենապետութիւն կ'ընէր՝ իբր երիցագոյն անդամ ժողովոյն։

1871 ին Տնտեսական խորհրդոյ գործօն ադամն էր, յետոյ անցաւ Քաղաքական ժողովոյ մէջ։

1875 ին կ'անդամակցէր Կալուածոց դիւանին։

Երկու անգամ Պրուսայու վիճակայնոց կողմանէ ներկայացուցիչ ընտրուած, և տեղւոյն Գաւառական ժողովոյն անսահման վստահութեան արժանացած է, յատուկ չնորհաւորական պաշտօնագրերով։

Մանուկեան Սեննեքերիմ էֆէնտիի հետ անդամ եղած էր այն յանձնաժողովոյն, որ յաջողութեամբ կարգադրեց Ս. Փրկչեան Հիւանդանոցի պարտիզի սեպհականութեան մասին ծուռնաց կողմանէ յարուցուած խնդիրը։

Քրիստոստուր էֆենտի չատ հոգածու գտնուեցաւ նաև Պատրիարքարանի պարտուց վճարմանը, զոր դիւրացնելու համար իրար կը խառնէր այլ և այլ անուններով գանձուած հաստիքները, ասոր համար չատ անգամ ալ քննադատութեան առարկայ կ'ըլլար։

Պատրիարքարանի արձանագրութիւնները՝ օրը օրին պատրաստուիլը և տպուիլը կը չեշտէր։

Ժողովոց նստերէն բնաւ բացակայ չէր մնար։ Ցուրտ օրերն իսկ կուգար, չատ անգամ ալ հիւանդանալով։ Իր ձրի բժիշկն էր՝ Վ. սեմ. Աալանեան Ստեփան փաշան։

Ժողովոց մէջ յուզուած և ծեծուած ծանրակշիռ խնդիրները՝ խոհեմութեամբ կարգադրել կուզէր, բայց 1885 ի կաթողիկոսական խնդրոյն մէջ՝ ամենէն յանդուգնը հանդիսացաւ, և խղճի ու եկեղեցւոյ խնդիր նկատելով զայն՝ մինչև վերջը անդրդուելի մնաց։

Ժողովոց որոշումները կը յարգէր և յարգել տալ կը սիրէր։

Անգամ մը ժողովոյն գումարումը՝ փոխանակ ըստ որոշման ութթաթի, քահանայութեամբ չորեքշաբթի տեղի ունեցաւ։ Քրիստոստուր էֆ. ըղղեց, և սաստիկ յուզուելով՝ հիւանդացաւ...։

* * *

Ուղևորութիւններ և հեռաւոր քաղաքներ տեսնել չատ կը սիրէր։

19 տարեկան հասակէն, այսինքն, 1835 էն, սկսաւ ուղևորութեան, և առաջին անգամ յԱրմաշ գնաց։

17 անգամ Արմաշ ուխտագնացութիւն ըրած է Քրիստոստուր էֆ. և վերջին երթալն եղած է՝ 1875 ին։ Այն երթալուն ալ՝ դարպաստ տուած է վանքին։

Ռոտոսթօ գնացած է երեք անգամ՝ 1835 ին, 1858 ին և 1867 ին։

1864 ին Սամսոն ուղևորած է առևտրական գործով։

1867 ին Սամսոնի ճամբով Ամասիա, Եւդոկիա և Սեբաստիա երթալով, տարիի մօտ կեցած և տեղւոյն կրթական գործոց խառնուած, և անձնանուէր ընկերութեան մասնաճիւղը բարեկարգած է։

Այս առթիւ Զառա ալ այցելած է, և 1868 Մարտ 1 ին մի և նոյն ուղեգծով վերադարձած, և ի Սամսոն՝ երկու շաբաթի չափ կեցած է՝ Եդեսեան Սրբազանի խնդրանօք, որոյ վաղեմի բարեկամն էր։

1868 Ապրիլ 7 ին՝ Պաֆրա գնաց, և 18 օրուան մէջ, Առաջնորդական բարեկարգութիւններ կատարելէ և դպրոցական տնօրինութիւններ ընելէ յետոյ, Ապրիլ 25 ին Սամսոն վերադարձած, և Մայիս 1 ին ի մայրաքաղաքս ժամանած է, այցեյած քաղաքներու վարժարանաց մէջ քիչ չատ բարեկարգութեան սերմեր ձգելով։

1872 Սեպտեմբեր 15, ի Պրուսա ղրկուած է, յանուն Քաղաքական ժողովոյ, Իզմիրլեան Մատթէոս Վարդապետի (այժմ եպիսկոպոս) հետ՝ որ Կրօնական ժողովոյ անդամ էր, և անդառաջնորդական խնդիրը կարդադրելով՝ Տ. Բարդուղիմէոս Սրբազանին իւր պաշտօնին մէջ հաստատուիլը խնդրած է Աղգային՝ կեդրոնական վարչութենէն։

47 օրուան Ղիմպիական ուղևորութենէ մը յետոյ՝ Նոյեմբեր 1 ին վերադարձած է իւր պաշտօնական ուղեկցին հետ ի Պօլիս։

1877 Օգոստոս 29 ին կարծեմ Հասա ալ պիտի ուղևորէր։

ընկերակցութեամբ Փափազեան Ստեփան և Խօճասարեան Օգաէն էֆէնտիներուն, բայց ետ մնաց։

* * *

Քրիստոստուր էֆէնտի՝ Պիզմարգի տարիքն, և վ. Հիւկոյի բնութիւնն ունէր։

Հիւկօն՝ հանրակառքին (Օմնիպիւս) վերնայարկը կը նստէր, ուսկից պաղ առաւ, հիւանդացաւ և մեռաւ։

Ղազարոսեան ալ ժողովրդեան արհեստաւոր և միջին դասակարգին մէջ ապրիլ կը սիրէր, ուստի թէ՛ չոգենաւուն և թէ՛ հանրակառքերուն ու չոգեկառքերուն մէջ դէպ-ի-ներ կամ երկրորդ և կամ երրորդ աստիճանի ժողովրդեան յատկացեալ տեղերը կը նստէր։

Վարագայ վեհաստանի 35 ամեայ վանահօր՝ Սրբամիպաչիի տունը վարժապետութիւն ըրած ատեն, նուազ բարեխօսած չէ ճարտարապետ Ա.յվազեան Յովհաննէս աղային, որ տանը տղանդաւոր վարժապետին բանաստեղծական երկասիրութիւնը տպել տուաւ։

Իւրովհանն կ'աշխատէր ամեն բարենպատակ գործոց։

Խազիւղի Գալֆայեան կամ Արբուհեան Որբանոցն ալ՝ նախասիրած հաստատութիւններէն էր։ Ուստի երբ այդ գթութեան յարկին մէջ մատուռ մը չինելու գաղափարն յղացուեցաւ, իրականացնելու համար զայս՝ ամենէն աւելի վափաքողներէն և գործողներէն մէկը եղաւ՝ հանդէպ Պատրիարքարանին։

Իակ ինքը, իւր այս բոլոր բարեսրտութեամբը ու բարեգործութեամբը հանդերձ, երբեմն խուլ և ձրի հակառակորդներ ալ ունեցած է 1858 էն սկսեալ։

Յաւօք կը չիշեմ 1878 ին, Փիլիճի—Վարդանի խնդրոյ մը համար 21 ամիսներ՝ յոռի չրջաններ կատարելը այլ և այլ պաշտօնատեղիներ։

* * *

Քրիստոստուր էֆ. ամաւրի էր, բայց մինչև վերջը բարեպաշտութեան և ողջախոհութեան տիպար հանդիսացաւ։

Քանիցս՝ Երուսաղեմայ Հանգ. Եսայի Պատրիարք գինքը յԵրուսաղէմ հրաւիրեց թէև կրթական պաշտօնով, բայց իսկապէս կրօնաւորելու նպատակաւ։

Քրիստոստուր էֆ. ալ թէև այս փափաքին իրագործման չէր ուզէր հակառակիլ, և մանաւանդ չատ կ'ըղձար որ Զմիւռնիա և Երուսաղէմ քաղաքներն տեսնէ, սակայն պարագայները չի ներեցին, և դինքը բոլորովին կրթական ասպարիզին մէջը դրին սահմանափակեցին, այնպէս որ օրին մէկը լսուեցաւ թէ՝ Քրիստոստուրի դասախօսութիւնք Մայր–Վարժարանի տարեկան հարցաքննութեան առեն բարձրաստիճան եկեղեցական և տաղանդաւոր անձնաւորութիւններէ գնահատուելէ յետոյ, ինքը կաթուածահար եղեր, և քանի մը օր տանը մէջ խնամուելով Ազգային Հիւանդանոց փոխարուեր է անդամալոյծ վիճակի մէջ։

Քանի մը օր յետոյ, ոչ ևս էր Քրիստոստուր Ղազարոսեան։

Ամեն ոք կը փափաքէր ու կսպասէր որ հանգուցեալին մարմինը ամփոփուի՝ Ազգային Հիւանդանոցին մէջ, ուր այնքան ժամանակ աքնեցաւ, կամ Սամաթիոյ Ս. Գէորգ եկեղեցւոյն բակը, Սահակեան վարժարանին տուած արդիւնաւոր աշխատութեանց փոխարէն և կամ Ղալաթիոյ Ս. Լուսաւորիչ եկեղեցին, որու կիւրակնօրեայ դասարանի հիմնադիրներէն մին և 30 ամեայ անձնուէր ու անխոնջ ուսուցիչն եղած էր։

Եւ սակայն տարի՛ն, թաղեցի՞ն գինքը Պալըքլըյի մեռելավայրը, ուր իրմէ առաջ ուրիշ նշանաւոր վաստակաւորներ ալ թաղուած ու մնացած են աննշա՛ն. . . ։

Ս. Ց. ՍԵՎԱԶԵԱՆ

ԻՄ ԶԳԱՑՈՒՄՆ

Աո. Գ. Ս.

Երբ սեւ աչերդ մեծագեղ, անթարթ դիտեմ իմ աչեր,
Եւ հոն կարդամ լուիկ մնչիկ խորհրդաւոր գաղտնիքներ,
Չ'գիտես արդեօք ի'նչ կ'զգամ։

Երբ կը տեսնեմ դէմքիդ վրայ անմեղ ժպիտ խաղդավառ,
Դէմք շնորհալիր հրեշտակատիպ, հանգոյն լուսնոյ նրավառ,
Ո՛հ չ'գիտես ի'նչ կ'զգամ։

Շրթունքներդ նուրբ կարմրալար, երբ իրարմէ կը զատուին,
Եւ երբ անտի խօսքեր բուչին ու մեղրի պես կաթկըթին,
Չը գի՞տես թէ ի՛նչ կ՛զգամ։

Վարդի նման քնքոյշ սիրտդ երբ բաբախ ներս ի ներս,
Եւ երբ անբիծ զգացումներ սիրատրոփ առնուն քեզ,
Միթէ չ՛գի՞տես ի՛նչ կ՛զգամ։

Ձոյր իմ, աչերդ, դէմքդ, շրթներդ, ինձ խինդ միայն ներշնչեն,
Սակայն սրտիդ զգացումներ նոգւոյս նոր կեանք կը շնչեն,
Անո՛ գիտցիր ի՛նչ կ՛զգամ։

21 Յունվար 1894
Փատը–Բէօյ

Գ. Ս. ԴԻՄԱՔՍԵԱՆ

ՄԻ՛ ՄՈՌՆԱՐ ՁԻՍ

Աւտ. Օրիորդ Ռ.

Աչերդ՝ հանգոյն արուսեակիճ,
Որոց մէջէն տեսնեմ գերկինն.
Ջերկինն՝ համակ յուսապայծառ,
Բիւր աստղերով շողայ հառ՛սար։

Բոց մ՛է սիրտդդ՝ հնոցավառ,
կեանց արիւնն՝ ուր վառի յար.
Այրեց, լափեց, հիմա ալ սիրտ,
Գըթա՛ ո՛ կոյս, մ՛ըլլար անսիրտ։

Շատ ամիսներ ըսպասեցի,
Սիրոյ գըրիդ՝ խիստ ծարաւի.
Բայց աւա՛ղ ինձ, ո՛ սիճ յոյսեր,
Ըզգացի թէ զիս են խաբե՛ր։

Վերջին անգամ մ՛ալ ուզեցի,
Գըրել առ քեզ, ո՛ տարփելի
Թերեւս գըթաս, սիրտդդ յուզի,
Լըսես ձայնիս աղերսալի։

Մուք գիշերներ անցայ տակեն
Պատուհանիդ՝ լուսափեղկեն
Սեր երգեցի, սե՛ր սրտայոյզ,
Վըհատ, լըռին, դարձայ յետկոյս։

Ջերդ բուչինկըն այն վիրաւոր,
Գետին ինկած բաւալգըլոր·
Կը հառաչեմ յոյժ դառնագին,
Ջեղաւ դարման սիրոյս ախտին։

Ուրեմն վերջ տո՛ւր կեանքիս տրխուր,
Առաջնորդէ՛ գիս մահուան դուռ·
Ուր պի՛տ հանգչիմ միշտ անխըռով
Ի հող· հանգիստ խաղաղ քընով։

Զուգեմ երբէք շիրմիս վըրան՝
Կանգնես շըքեղ մի մահարձան·
Ներքուդ, պսակ թէ շըռայլես,
Գիտցի՛ր որ իմ հոգին խոցես։

Այլ պարզ մի քար անսեքեւեր,
Որուն վրայ քանդակուի գէր,
«Երիտասարդ մի եղկելի,
«Թըշուառ մի որ աստ կը հանգչի։»

15 Մարտ 1894
ի Մաղնիսա

Ս. ՓԱՓԱԶԵԱՆ

ԼԵԶՈՒԻ ԽՆԴԻՐԸ

. . . խմբագրապետ

Լեզուի խնդիրը՝ որ երկար ժամանակէ իվեր տեղի տուած էր կարգ մը աւելի կարեւոր հարցերու առջեւ՝ վերջերս ուժգնութեամբ սկսաւ երեւան գալ դարավերջիկ գրականութեան մէջ։ Տարօրինակ խնդիր մ'է այն, մեռած բան մը՝ որ երբեմն կը չարժի ժամանակակից դէպքերուն մէջ իր այժմէութիւնը ցուցընելու համար կարծես։

Ֆրանսացի գրական մարդիկ՝ որոնց գործերը շատ չ'եմ ճանչնար՝ խնդիրը այլ և այլ ձեւերու տակ կը յուզեն չարունակ·

Բայց անիկա խնդիր մը ըլլալէն աւելի՝ բարոյական երեւոյթ մ'է, պարզապէս բարեչրջման (Evolution) տիեզերական օրէնքին մէկ նշանը, ցածնալու կամ բարձրանալու խնդիր մը։ Այն ազգեր՝ որ առանձին գրականութիւն մը ունեցած են՝ չարունակ լեզուի խնդիրն ալ ունեցած են ուղղակի կամ անուղղակի։ Լեզուները միշտ դէպ ի յառաջ չարժումի մը ունեցած են։ Քաղաքակրթութեան մէկ պայմանն է այս։ Ազգերու մէջէն միակ մէկ հատ կը յիշեմ, Սպանիան՝ որ սահմանափակ վիճակ մը տուած է լեզուին՝ զանիկա քերականական և բառական խիստ կանոններու ներքև ճնշելով, գրական լեզու մը՝ որ ալ դադարման դատապարտուած է։ Եւ 200 տարի առաջուան Տօն Ալվարէզը և հիմակուան Քարլոը նոյն ոճը ունին։

Անգլիական գրականութիւնն ալ այդ խնդիրէն անմասն չէ։ Ինացած։ Շատեր եղած են, մանաւանդ վերջերս՝ որոնք ուզած են գրական բառերու մէացնել ռամիկ դասակարգին մէջ ալ գործածուած ասութիւնները՝ խորհելով թէ աւելի յառաջացում մ'է լեզուի համար։ Եւ այդ կարգի խորհողներուն պետը Փրօֆ. Ճօրճ Հուիքինս երկու տարի առաջ տակաւին Լոնտոնի ռամիկ լեզուովը իր ամենէն սքանչելի հատորներէն մէկը գրեց — վակապոնտի մը սէրը վերնագրով, Լոնտոնեան կեանքէն տուամ մը։

Ա. Տպագրութիւնը սպառեցաւ չուտով։ Հիմա ալ չի՛ ծախուիր։ Լոնտոնի ռամկութեան լեզուն չատ փոխուած է հիմա և այդ հատորին չատ մասերը անհասկընալի դարձած են։

Ահա այս է առաջին և միակ վտանգը՝ որ կը ներկայանայ գրական մարդոց առջևը։ Ժողովրդին բերնին մէջ բառ մը այսօր ինչ որ կը նշանակէ վաղը նոյնը չի՛ պիտի նշանակէ։ Եւ այսպէս յարափոփոխ հիման մը վրայ քաղաքակրթութեան ամենագեղեցիկ մասը՝ գրականութիւնը, վտահիլ՝ չատ խելացիութիւն չէ։ Հիմա պիտի չկրնայինք հասկնալ Վալտր Սքօթը՝ եթէ իր գործածած սկովտիական բառերու բառարանը միասին չունենայինք։ Ուէպսթըրի հռչակաւոր բառարանէն վերջը ելած նորանոր բառդիրքեր՝ անգլիական լեզուին ճոխութիւնը մինչև 250000 բառի կը հասցունեն։ Բայց այդ բառերու չատ քիչերը միակ գրական լեզուին մէջ գործածելի են։ Շէյքսպիր՝ անգլիական գրականութեան ամենամեծ դէմքը՝ 15000 բառ միակ գործածած է՝ բայց իր լեզուն այսօր ալ գրական ըլլալէն չէ՛ դադրած։

Գանք ուրիշ խնդրոյ մը։ Դարաւոր լեզուի մը հիմերը խախո-

տել չատ դժուար է։ Նիւ–Եօրք Հէրըլտի համար անտեսագիտական տեսակէտով չատ օգտակար էր բառերու մէջ գըտնուած աւելորդ դրերուն վերցուիլը։ Գանգի մինակ though (թէ և) բառին ugh ը այն թերթին վրայ տարեկան 1,000,000 տոլարի կը նստի։ Բայց խնդիրը լեզուագիտական տեսակէտէն դիտելով՝ Անգլիացին մերժեց այդ բարեփոխումը՝ դիտելով թէ անկէ վերջը չատ պիտի դժուարանար լեզուին ծագման քննութիւնը՝ որ ազգին ծագման գիտութեան հետ այնչափ սերտ յարաբերութեան մէջ էր։

Գալով մեր լեզուին արդի վիճակին՝ չատ տխուր է այն։ Յանցառ, անորոշ, լոյծ ու անկերպարան վիճակ մ'ունի։ Արիական լեզուներէն Տուրանեան լեզուներու կարգը մտնելու ճամբուն վրայ է։

Կընդունիմ գաւառաբարբառը գրականութեան մէջ մուծանելու դրութիւնը եթէ անոր բառերը հոմանիշ չունենան հին գրական լեզուին մէջ։ Գերմանները որ այնչափ անջատ տարբերէ ու լեզուներէ կը բաղկանան՝ իրենց համար կազմակերպեալ մէկ լեզու ունին, գրական լեզուն։ Եւ գերման գպրոցներ թէ և միչտ իրարու հակառակ սկզբունքներու մասին՝ այլ միչտ միաբան են լեզուն ճոխացնելու, աղնուացնելու գործին մէջ։

Ջուտ նորասիրութեան ու ծոյլի համար լեզու ոչնչութիւնը պատասխանատու են ազգային, մանաւանդ ազգերու ծագման քննութիւնը հիմա այնչափ յառաջացած է որ քմահաճոյքի մը համար լեզուի մը հիմերը խախտելը՝ հնութեան վրայ լոյս սփռող յիշատակարանի մը ջնջելուն կը նմանի։

Ներեցէք, Խմբագրապետ . . . եթէ դիտել տամ թէ լեզուի խնդիրը զուտ պատրուակ մըն է թերևս կարգ մը անձնական խնդիրներու։

Եթէ յարմար դատէք՝ կը յուսամ թէ պիտի չը՛ զլանաք Աբև. Մամուլի մէջ անկիւն մը այս տողերուն համար։

6/18 Ապրիլ
Գոպէ–Բէյ

Խորին Յարգանօք
ՌՈՒԲԷՆ ՈՐՔԵՐԵԱՆ

ԻՄ ՄԱՆԿԱԿԱՆ ՅԻՇԱՏԱԿՆԵՐԷՍ

ՅՈՉ

Պօղոս հերաւտ բարի վարժապետը — հին պարզ և միամիտ պատուելիի անձերի տիպար մը — աչքիս առջև կուգայ իր հաժեստ ճիւսպլէօվը, իր էնթարիովը, ղլուխի խոշոր փաթոցովը և լերկ դէմքովը ու գանկովը՝ որ այնքան տարօրինակ տպաւորութիւն կ'ընէր ղինք տեսնողին վրայ։ Հինաւուրց վարժապետը եթէ ոչ իր քրօնիկ մկկ ախտը՝ գէթ մաղերու ամրողջութիւնը թողեր է՝ ինչպէս կը պատմէր՝ Պրուսայի եռացեալ բաղնիքի մը մէջ՝ ուր գացեր է եղեր բոյժ ու դարման գտնելու երկու ընկերներու հետ՝ որք վիճակակից եղեր են միևնոյն ղըժբաղդութեան։ Ամենէ զարմանալի կէտն ա՛յն է որ ծերունի վարժապետին գլուխ մազի և ոչ իսկ մկկ թելն ղերծ մնացած էր այս անսովոր փորձանքէ։ Որքան որ բնախօսօրէն դժուար ըլլայ բացատրել այսպիսի բացառիկ պատահար մը, այլ ի՞նչպէս կարելի է երկբայիլ հերաւտ բարի վարժապետին բարի պատմութեան վրայ, քանի որ ստախօսութիւն չկար բնաւ իր աննենգ բարուց մէջ, ինչպէս կրցած էինք հաստատել մեր երկարամեայ մտերիմ յարաբերութիւններու ընթացքին . . . ։ Պէտք կ'ըլլայ ենթադրել թէ Զիմլիի օգտաւէտ ջուրերը հերային դրութեան վրայ թռնաւոր բացառիկ ներգործութիւն մ'ունեցած ըլլան այն օրը, նա՛և մարմնոյ այն մասերու նկատմամբ՝ որք անմիջական հպումի մէջ չէին իրենց հետ։

Ուշնակապաշտ մէկն էր Պօղոս վարժապետ, հետևաբար և յետին աստիճանի յարած իր հին կարծիքներու և սովորութիւց՝ որոնց և ո՛չ մէկէն մազի չափ չեղեցաւ մինչև իր յետին չունչը։ Ինչպէս իր ներքին՝ նոյնպէս և իր արտաքին նկարագրի անթերի հաւատարմութիւն ցուցուց նա։ Անկարելի եղաւ որ հին մարդը փոխէ իր հին արևելեան հագուստը, թէև եւրոպական տարազը անգամ մը մուտ գտած՝ զարմանալի արագութեամբ կ'ընդհանրանար Իզմիրի Հայոց մէջ։

Ըստ սակայն իր ժամանակը՝ և մանաւանդ իր կեանքի վերջին տասը տարիներու մէջ՝ բարքերու, գաղափարներու, ձևերու ու սովորութիւց, բարոյական, մտաւոր և հոգեկան պայմաններու մեծ և զգալի փոփոխութիւններ արդէն սկսած էին տեսնուիլ՝ որք հիմնիվեր յեղաշրջում մը կը ծանուցանէին ամէն տեսակէտերով։ Փոխանցման (transition) ճշմարիտ դրագլուխ մ'էր այն։ Անտարբեր և արհամարհոտ դիտող մ'էր հինաւուրց վարժապետն այդ բոլոր նորութեանց. նա իբր հաստատուն ժայռ մը՝ կը վանէր ու կը փշրէր նորութեանց կոհակներն որք ևս քան

զևս յանդուգն ու ամեհի՝ կուգային կը գարնուէին իրենն։ Միշտ նոյն՝ միշտ անսասան կը մնար Պօղոս հերաւտ վարժապետ հին բարի ժամանակները պատկերելով և հին բարի մարդը ներկայացնելով, հին մարդը՝ իր պարզ ու պաշտելի միամտութեան յատկանիշով և նպաստաւոր և աննպաստ հանգամանքներու չըմոռի խառնուրդի մը մէջ։ Միակ դիջումը՝ զոր ժամանակը և իր ընտանեաց թախանձելի թելադրութիւնները կրցան կորզել իրմէ, արտաքին նշանակի մը վրայ կայացաւ, այն է իր ծաւալուն միջակոչին մեծկակ գիէսի մը վերածումը վերջապէս, ինչ որ առանց մեծ և յամառ ընդդիմութիւններու չեղաւ։ Ստուգապէս՝ յեղաշրջումը այդ գիէսին չրջագիծէն անդին անցած չէր Պօղոս վարժապետի վրայ։ Այդ գիէսը հին մարդուն անհատականի միակ յառաջդիմութիւնը կը ներկայացնէր՝ իր չուրջը կատարուելու վրայ գանուող նիւթական և բարոյական աշնքան մեծ և նշանակելի յեղաշրջումներու մէջ ։ ։ ։

Մեծ ինչեաւէ մ'էր հին պատուելին, թիւրեաքի մ'իր կերպովը և կրկին ձևերու տակ։ Եթէ ձեռքը չառնէր քթախոտի տուփին՝ որմէ առլի պղտունց մը քաղելով կը մղէր՝ կը մղէր միշտ անհուն հեշտութեամբ իր լայն պինդերէ ներս, գրասեղանէն գուրգուրելով կը հանէր անչուշտ թիթեղեայ կլոր տուփ մը՝ զոր կը պահէր հոն միշտ զեղուն հոտմ խահուէով, և որմէ պզտի դգալի մը միջոցաւ՝ որ ի պատրաստի կը գտնուէր, ի տես աչակերտաց կը վայելէր անպատում ախորժով։ Սրճամոլութեան ուրիշ ձև մը, այնպէս չէ՞։ Հին թիրեաքիի աչքին՝ ամբոսիայի՝ Աստուածներու անմահական կերակուրի նման բան մ'էր այս մթագոյն փոշին՝ որ անմահութիւն միայն չէր պարգևեր գինք ճաշակող երջանիկ մահկանացուներու։ Գէթ ու ղրդում (stimulation) արտադրող այս կրկին ազդակներով ոգեւորուած՝ եթէ ոչ ծայրագոյն արժանեօք՝ գէթ ժրապէս և ազդուապէս կը կատարէր Պօղոս վարժապետ իր պաշտօնի պարտականութիւնները։ Անգածոր ծերունին թխագոյն թաշկինակով մը կը սրբէր իր քթէ անպակաս կարմրագոյն ծլուլը (roupie) ալևոյթէ թուլցած լորձնամաշկերու (muqueuses) արտադրութիւն՝ առատ քթախոտով ներկած, որ առանց այս զգուշաւոր մաքրութեան վար կաթելով պիտի բծաւորէր անվրէպ իր կարդացուցած մանկան քերականը կամ՝ այն ընդարձակ պատկերազարդ Աստուածաչունչն, որու ամենօրեայ ջերմեռանդ ընթերցումն իր բարեպաշտական անխախտ սովորութիւնն էր։ Այս բարի սովորութեան մասին բաւական կուարձալի մանրամասնութիւն մը պիտի պատմեմ աւելի վարը։

Խիստ բարի և խիստ պատուական մարդ մ'էր Պօղոս վարժապետ։ Մեր գեղեցկերքի տունը պատկից էր իր բնակութեան՝ ուր ախորժ կ'զգայի երթալ ամէն անգամ որ յոգնած դադրած կարդալէ կամ դաշնակէ՝ որու բուռն կերպիւ անձնատուր եղած էի դպրոցական կենցաղ վերջին տարիները, փորը հան-

գաւի մը պէտքը սոխպողապէս կ'զգայի։ Ինչ ուրախութեամբ և ինչ խնդուն երեսով կ'ընդունէր զիս արժանաւոր դրացիս։ Օ՜, պէհ-հո՜ս, ծօխէօ լը էֆ-ֆէ, բաւական յստակ արտասանուած այս բանաձևով կ'ընդունէր զիս ստէպ, բանաձև՝ որ ալևոր պատուելիին Ֆրանսերէնի ամբողջ պաշարը կը ներկայէր, և զոր ուսած էր չգիտեմ ո՞ւր և ինչ առթիւ։ Սիրելի էր ինձ իր բոլոր ընտանիքը, ուր մաքուր բարք և նահապետական սխրալի պարզութիւն մը կը տիրէր։

Երկիւղած քրիստոնեայ մ'էր իմ ծերուկի դրացիս, այն երկիւղածներէն՝ որոնց տիպարը հիներու մէջ միայն կարելի է գտնել. չկար բան մ'որ հաւատարէր իր անսասանելի բարեպաշտութեան։ Տարուան բոլոր պահքերը՝ մեծ ու պզտիկ՝ անխտիր կը բռնէր նա իր ընտանիքի հետ՝ իրեն պէս երկիւղած, նոյն իսկ բուն բարեկենդանի չորեքշաբթի և ուրբաթ օրերը, կերուխումի նուիրած չարթու այդ կրկին պահեցողութեանց մասին ա՛լ աւելի խիստ ու անողոք հաւատարմութիւն մը ցուցնելով։ Դժուարին փորձութեանց յաղթողաբար դիմադրելն ա՛լ աւելի արժանիք չե՞ներ տիրեր մինչ ճշմարիտ քրիստոնեայի մը կողմէ։

Հինաւուրց բարեպաշտն ամէն օր ժամ կը յաճախէր անպակաս։ Միայն մէ՛կ եկեղեցի երթալը բաւական չէր իրեն համար. իւրիրի հայոց երկու ժամերն ալ իր ջերմեռանդ ու կանոնաւոր այցերը կ'ընդունէին անվրէպ։ Սուրբ Լուսաւորչէն Սուրբ Ստեփաննոսի տունը կերթար, Սուրբ Ստեփաննոսէն Սուրբ Լուսաւորչի տունը. երկու սիրուած հին ծանօթներու տուներ։ Տեսնելու էր թէ ինչ երկիւղածութեամբ հին հաւատացեալը կը համբուրէր տաճարի դրան սուրբ քարերը, ինչ հոգեզմայլ յափշտակութեամբ աղօթքի կը կենար Աստուծոյ առջև։ Կարծես թէ երկնի և երկրի Արարիչը ճիշտ դիմացն եղած ըլլար և անոր հետ խօսակցէր «ճշմարտապէս և ոչ կարծեօք»։ Երկիւղած քրիստոնեան չէր մոռնար ամէն անգամ անթերի հաւատարքով իր համեստ մոմը վառել Նախավկայի կամ մեծ Սուրբի առջև։

Պնունդի դիշեր մ'եկեղեցի գացած էր՝ երբ տակաւին երկար ժամեր կար լուսնալու։ Հին ատեններ Պննդեան ժամերգութիւնները կէս գիշերին կ'սկսէին։ Ետքէն երբ ժողովուրդի կրօնասիրութիւնը թուլցաւ, երբ ժամասիրութիւնը հետզհետէ և համեմատաբար պակսեցաւ անոր բոլոր խաւերու մէջ, վերչն սկսեալ կամաց կամաց մինչև վարը, կէս գիշերին ժամ երթալու անպատեհութիւնները սկսան երևան ելնել։ Խնդիք էր յուն-վարի սառին ու բուքին ժամ վազել գիշերայն, հիւանդութեան պարզապէս հրաւէր կարդալ չէ՞ր այս, «հարուհաղը» ամենէ պզտիկ անպատեհութիւնն էր որով այսպիսի ծանր անխոհեմութիւն մը կրնար պատժուիլ։ Ինչ կ'ըլլար երթէ աւելի յարմար ժամ մ'սկսէր եկեղեցին. աղօթքը աղօթք չէ՞ միթէ։ Հաւատացեալները հիւանդացնել գո՞րծ է։ Չարկ էր տեղի տալ

ժամանակի տիրող կարծիքներու ևրարեպաշտութեան հետ խո-
տոր համեմատութեամբ աւելցող մարմնապաշտ ղգացումներու։
ժամերգութիւնք կէս գիշերէ վերջ սկսան կատարուիլ, հետզ-
հետէ աւելի՛ վերջ, և վերջապէս առաւօտեան լոյսը գտան։
Ծնունդի ժամերգութիւնը հիմայ արշալոյսին կ՚սկսի, երբ ժա-
մանակաւ արշալոյսին կամ անկէ յառաջ իսկ լմնցած կ՚ըլլար
արդէն։

Նոյնը պատահեցաւ նաև աւագ հինգշաբթի գիշեր խաչա-
րութիւն մասին՝ որ առջի ատեններդ կէս գիշերին կ՚սկսէր առ-
տուան դէմ վերջանալու համար, և զոր հիմա ըստ ևրոպացւոց
ժամը 8 ին կ՚սկսին իրկիրի մէջ և կէս գիշերին ամեն ինչ լըն-
ցած՝ հաւատացեալք կ՚երթան իրենց հանգիստ քունը վայելե-
լու՝ որմէ թերևս չկիտի ուզէին զրկուիլ նոյն իսկ Քրիստոսի
չարչարանաց յիշատակի սիրոյն . . . ։

Արդ իր հին բարեպաշտ սովորութեանց հաւատարիմ՝ Ծնըն-
դեան կէս գիշերի մը ժամ գացած էր Պօղոս վարժապետ՝ ինչ-
պէս ըսինք։ Դժբաղդաբար սաստիկ ցուրտ կ՚ընէր նոյն գիշերը,
անօրինակ կերպով սաստիկ ցուրտ մը, և ինչ որ աւելի ծանր
էր՝ միսթիքական հին բարեպաշտն՝ ի տես երկնից սովորականէ
աւելի երկար ժամանակ իր աղօթից ու մաղթանաց մէջ տա-
զուած էր բացօթեայ գաւիթներու տակ։ Այն գիշերէն ծան-
րութիւն մը մնաց իր մէկ ականջի լսողութեան վրայ՝ բուռն
ջերմեռանդութեան մ՚իրր անմոռաց յիշատակ։ Իր անխոհեմու-
թիւնը չափազանց բնաւ մեծահաւատ ծերունին։ Իր բովանդակ
մարմնով և անոր բոլոր գործողութիւններովը Աստուծ չէ՞ր
վերաբերեր միթէ . . . ։

Յաւելուածոյ ժամերգութիւններ ալ ինք իր ձեռօք կը կա-
տարէր բարեպաշտ քրիստոնեան։ Աղօթավայր մ՚ալ իր բնակա-
կարանն եղած էր։ Իր առաջնորդութեան տակ Մեծ պահքի ա-
ռաջին չորեքշաբթիէն սկսեալ ամեն գիշեր « Եկեսցէ » կ՚ըսուէր
իր տունը, ուր դրացիք կը հրաւիրուէին կոչնակի մը միջոցա-
րու ճայնը բաւական հեռուն կը լսուէր։ Չէ՞ն անմեղ ու բարի
ժամանակներ։ ինչ որ կոչնակ անուանեցինք՝ եռանկիւն երկաթ-
մը հասկնալու է՝ զոր ուրիշ երկաթի կտորով մը կը հնչեցնէր
աստուածավախ վարժապետը կամ իր որդին՝ իմ հին սիրելի
ընկերս՝ Մեսրոպեան վարժարանի առաջին դասի աշակերտ
այն ժամանակները, երբ ես երրորդ դասի դրասեղաններու
վրայ կը դանուէի տակաւին . . . ։

Իր ընտանիքը կը պատմէ թէ 1850 ի մեծ երկրաշարժին
Պօղոս վարժապետ կը սկսի « հակումներ » կատարել տան մէջ
մինչև որ վերջնայ այդ մեծ փորձանքը՝ այդ երկնառաք յայտ-
նի պատիժը մեր ծանր մեղքերու։ Ընտանիքը դիտողութիւններ
կ՚ընէ թէ տան մէջ « հակում » կատարել օրինաւոր չէ՛, քան դի
ա՛յլ է « հակում », ա՛յլ է « Եկեսցէ »ի պարզ աղօթքը։ Մեծ

դժուարութեամբ իր բարեպաշտ և յամառ որոշումը կը փոխէ հին հաւատացեալը՝ «Եկեցէ»ով գոհ ըլլալով, այլ սակայն պարտք դնելով իր ընտանեաց ամեն մէկ անդամի վրայ ամեն դիշեր չդիտեմ քանի՝ ծնրադրութիւններ կատարել մինչև որ երկնից բարկութիւնը դադրի մեզաւոր մարդկութեան վրայէ։

Գրեթէ անպակաս կը գտնուէին Պօղոս վարժապետի «եկեցէ»ին այս բարեպաշտ և միամիտ հրահանգի՝ որու մէջ հին քրիստոնեայի որդւոյն հետ գործօն դեր մ'իսկ կը կատարէր ի մեծ գոհունակութիւն ջերմեռանդ ծերունւոյն։ Երբեմն սակայն մանկական չարաճճութիւն կը խառնուէր գործին մէջ, և չնչին առիթով մը կ'սկսէինք ես և բարեկամս ծիծաղիլ Պօղոս վարժապետին ետևէն։ Մանկութիւնն ո՛րքան դիւրամէտ է խնդալու։ Եթէ մեր ծիծաղներ աննշմարելի կ'անցնէին ստէպ իր ժամերգութեան մէջ սուզուած հաւատացեալի կողմէ՝ կը պատահէր նաև որ անզգուշ և բարձրաձայն քոքիլի փոխուէին անոնք և մեր անվայել ընթացքի վրայ վերացեալ աղօթկերին ուշն հրաւիրէին իր հոգեզմայլ վիճակին մէջ։ «Եկեցէն» չէր կարելի ընդմիջել անշուշտ — թէև անսովոր երևոյթ չէ՝ տեսնել այսօր Աստուծոյ կրքոտ պաշտօնեայ մ'որ Սուրբ Պատարագն իսկ ընդհատէ սեղանի սպասաւորողն բարձրաձայն չնախելու և հայհոյելու համար — այլ զգն չարունակելով հանդերձ գայթակղեալ ծերունին չանթահարիչ չեզակի նայուածք մը կը ձգէր դէպի մեր կողմ՝ որ իր բոլոր պերճախօսութեամբ եթէ չէր զգաստացուներ զմեզ՝ գէթ կ'սթափէր կեղծաւոր ընթացք մը բռնել և աւելի զգուշաւոր կերպով չարունակել մեր խնդուքը՝ զոր մեծ դժուարութեամբ կը զսպէինք՝ երբ մանաւանդ «եկեցէ»ի գործակցութեան կարգը գար։ Մեր կատարած այդ գործօն դերի սիրոյն ստէպ անյիշաչար կ'ըլլար բարի ծերունին, այլ սակայն այն պարագայի մէջ՝ ուր համբ խիստ կը փափաքէինք, չէր մոռնար իր լուրջ յանդիմանանքն ընել մեզ՝ «եկեցէ»է ետք, յանդիմանանք՝ որու մտիկ կ'ընէինք կեղծ համեստութեամբ և սուտ ապաշաւի մը բոլոր պատիր ցոյցերով։

Հօրենական մեծ մայրս՝ Նուպար Աղայի կինը Հանըմ խաթուն երբեմն ներկայ կը գտնուէր Պօղոս վարժապետի «եկեցէ»ի ժամերգութեան՝ կատարեալ ջերմեռանդութեամբ իրր թէ բուն իսկ Աստուծոյ տաճարը գտնուէր։ Ցեփին աստիճանի երկիւղած կին մ'էր Հանըմ խաթուն, Պօղոս բարեպաշտ վարժապետի արժանի դրացուհի՝ որ ամէն օր երկար՝ խիստ երկար ժամեր կը նուիրէր հոգեպիշ աղօթից։ Գիշերն անկողին մտնելէ յառաջ և նոյն իսկ ամենացուրտ օդերու՝ իր ջերմեռանդ ծնրադրութեանց թիւը չկար անդաստակի մէջ՝ և ի տես բաց երկնից, հակառակ իր խիստ յառաջացած տարիքին։ Այդ բարեպաշտ տիպարները խիստ դժուար է գտնել հիմայ նոյն իսկ պառաւ կանանց մէջ։ Իսկ հարուստ դասին մէջ հաստատապէս չկայ։

Որքան երկիւղած՝ այնքան բարի, հեզ և խոնարհ կին մ'էր Հանըմ խաթուն։ Սովոր էր գլուխս ծունկին վրայ դնելով տա-րածուիլ բազմոցի վրայ, և ախորժ կ'զգայի պատմել իրեն տոհ-մային կամ ընդհանուր պատմութենէ այն հատուածներն՝ որք ամենէ աւելի տպաւորութիւն ըրած էին նորարոյս մտքիս վրայ։ Բարի կինը մտիկ կ'ընէր մեծ հետաքրքրութիւն յայտնելով կամ կեղծելով, քանզի այսօր անկարելի է ինձ դատել թէ ի՞նչ աս-տիճան իրականութիւն ունէր իր ցուցած հաճոյքը՝ որ այնքան գոհ կ'ընէր զիս . . . ։

(Շարունակելի)

ՄԵՍՐՈՊ ՆՈՒՊԱՐԵԱՆ

ԻՄԱՍՏԱՍԷՐ ՄԱՆԿԻԿ ՄԸ*

Ը

ՄԱԾՐ ՈՒ ԾԻԾՄԱԾՐ

Երբ մօրս ծոցէն առին զիս և ծիծմօրս գիրկը նետեցին, կարծեցի թէ լոյսէն խաւարն ընկայ։ Անկարող էի վարժիլ այն օտար թևերուն, որ կարծես սուր փուշեր ունէին, այն օտար ձայնին որ՝ ագռաւին ձէշտերն ունէր, այն օտար դպուանքին և պաչիկներուն՝ որ սառնագին կաթիլներու պէս մարմինս կ'ծակ-ծկէին, այն օտար կաթին՝ որ ղեղի համ ունէր և կոկորդէս վար չէր երթար։ Ուստի՝ քանի՛ անհանգիստ էի։ բայ իւի պէս կ'ալը-ղատէի, բրուկի պէս կ'կարմրէի և դուրս, այդ օտար ծոցէն դուրս՝ մօրս տաք ու բնական ծոցը կ'փնտռէի։ Յարաչարժ գը-լուխս, արտասուալի բիբերս, չորաբեկ շրթներս, դողդոջուն ան-դամներս ի զուր կ'բողոքէին նոր ծիծմօրս դէմ, որ այս չարժ-մունքս տեսնելով սկսաւ երեսը կախել և խոժոռ խոժոռ ինձ նայիլ։ Միայն մօրս սիրտը կ'զգար իմ կսկիծս, իմ տանջանքս. նա միայն օրը մի քանի անգամ իմ մօտ գալով՝ կ'ըսէր, կ'փայ-փայէր կ'համբուրէր զիս ջերմագին, և ես թոթռալով կ'նե-տուէի իր գիրկն և տքտքալով կ'քամէի այն նեկտարն որ իմ ի-րաւունքս, իմ գանձս, իմ կեանքս էր։ Ամեն անգամ, որ նոր

---

*Տես Ա. Մատեան 1893 Նոյեմբեր թիւ, երես 529։

ծիծմայրս, Նունէ, դիս կ'առնէր իր թևերուն մէջ, սուր ճիչեր կ'արձակէի, ողիկ ողիկ կուլայի, և իր մատուցած ստինքը բըռնելու կ'ուրժէի։ Մայրիկս՝ թէև մէկ կողմէ սրտանց կ'ուրախանար և կ'հպարտանար որ իր որդին մայրական կաթէն զատ ոչ ինչ կ'սիրէր, սակայն միւս կողմէ կ'դողար որ նորէն հայրս ու հանիս չսկսէին յարձակումներն և իր դորովը չվիրաւորէին։ Ուստի՝ միշտ զգոյշ՝ մի քանի շաբաթ ծածուկ կ'սպրդէր սոցնտուին սենեակն որ իրենին մօտ էր և իրրև օտարի մը գաւակն՝ դիս այցելելով՝ իր մայրութեան հարկը կ'վճարէր ինձ առատօրէն։ Իր երեսին դեղնութենէ կ'զգայի սրտին կրած այլայլութիւնն, նա մանաւանդ՝ երբ երբեմն՝ հեռանալու պահուն՝ վոքրիկ աչերս իր վրայ յառած՝ ոտնով, ձեռնով կ'խօսէի իրեն և կերպով մը կ'աղերսէի որ միշտ իմ քովս մնայ, մայրիկս կ'ինչնար սրտայոյզ աթոռի մը վրայ և կ'մրմնջէր։

— Ի՜նչ անգթութիւն։ մայր մ'իր զաւկէն բաժնել . . .

Եւ ապա ժաւերով անդ կ'մնար և կարծես կ'երազէր ստէպ կրկնելով։

— Թաթի՜կս . . . ո՞վ ձեռքէս խլեց Թաթիկս։

Իսկ ես նոյն պահուն մայրական կաթով կուռ ու կուշտ, մուշ մուշ կ'քնանայի՝ ծիծմօրս պաշտօնն ցայն վայր լինելով դիս օրօրել։

Սակայն այս ֆոլուէնէ յարաբերութիւնն անգամ մայրիկիս և իմ մէջ չատ գտան։ ի՞նչ կ'ըսեմ, մեղսակցական գտան։

Եւ իրօք՝ երբ դիշեր մը՝ լաց ու կոծիս կարեկիր՝ մայրիկս եկեր և դիս օրօրոցէն հանելով իր գիրկն առեր և անուշիկ օրօրներով ցաւս մեղմելու և աչքով ունքով ու ժպիտներով հետս խօսելու կ'ճգնէր՝ հոգեմտալ ջամբելով ինձ կենսատու աղբիւրըն, յանկարծ հանիս կէս արթուն կէս քուն ներս մտաւ, իբր ճիւաղ, սաւառնով մը փաթթուած և աչերը խոշոր խոշոր բանալով պոռաց։

— Շուտիկը տանի։ . . հիմակ խելքիս գայ . . . տուն դեղդ պիտի փլես, ապջիկ, այդ քու վարմունքովդ։

— Ի՞նչ կայ . . .

— Ձե՜ս հասկնար . . . ո՞ւր է Նունէն։

— Այս ժամուս ի՞նչու ելար անկողնէդ։ չորս դիս լրտեսներ առեր են . . . չեն թողուր որ զաւակս դրկեմ . . . մինչ այս ալ մե՞ղք է . . . լացը լսեցի և եկայ որ նայիմ . . . ։

— Ծիծմոր գործն ի՞նչ է . . . մեքի անոր հետ տեղ ու պաշտօն փոխեցիր . . . այդ իմ խելքիս բանը չէ . . . :

— Զաւակս ծնելէ ի վեր՝ ձեր ո՞ր բանը խելքով չնորհքով ըրիք: Ի՞մս է յանցանքը եթէ զաւակս ծիծմոր կաթը կ'ուզէ: Անօթի՞ թողում . . . :

— Հա՛, յանցանքը քուկդ է . . . աղջիկ, չես թողուր որ վարժի . . . : Ամեն բան վարժութենէ կախում ունի. Թաթիկն ալ պիտի վարժէր օտարին կաթն ուտելու եթէ չարունակ մէջ չմտնէիր . . . բայց հիմակ ո՞ւր է Նունէն . . . :

— Կէս ժամ առաջ հոս էր . . . :

— Կ'ե՞ս ժամ առաջ . . . Աստուած խելք տայ քեզ, հէք, միամիտ աղջիկս. այն տիրուհի և դուն սպասուհի պիտի լինիս:

— Եւ ի՞նչու կ'զարմանաս, քանի որ դու և էրիկս զաւակս ձեռքէս առիք և օտարին խնամոց յանձնեցիք, պատճառելով որ հիւանդոտ եմ: Այն օրէն ես գահէս ընկայ վար, և ծիծմայրն իմ տեղս բռնեց: Զե՞ս տեսներ որ իշխանուհւոյ մը հովեր է առեր. տան մէջ ամենուն կ'հրամայէ, ամենէ լաւ սպասառը կը պահանջէ. գաւաթ մը ջուր չվերցներ. ծանր խօսքի մը չհանդուրժեր. խոհանոցին սեմէն ներս չմտներ, և եթէ թեթև դիտողութիւն մ'ընես, երեսը կ'ծռէ իսկոյն, կ'սպառնայ մեկնիլ և զաւակս երեսի վրայ թողուլ . . . երանի թէ մեկնէր . . . արդէն գործ մ'ըրած չունի, կուտէ, կ'խմէ կ'քնանայ և կ'կարտուխ . . . : Ուրեմն ինչպէս կ'ըսես թէ իմ պաշտօնս կ'կատարէ . . .

— Շատ պարզ՛ւիա ես, աղջիկ . . . ես ի՞նչ կ'հարցնեմ . . . դու ի՞նչ կ'երգես . . . Ո՞ւր է Նունէն . . . :

— Կրողը տանի դինք: Ես իմ զաւկիս մօտն եմ, անոր վրայ անքուն կ'հսկեմ և այս ինձ բաւ է: Թո՛ղ վազը տունէս կորսուի . . . :

— Վազը ամեն բան կարգի պիտի դնեմ, աղջիկ, որ ծիծմայրն Թաթիկին քովէն չհեռանայ և դու ալ առողջութիւնդ գտնես, վասն զի ձեռքէ գացեր ես և չես զգար:

Եւ պառաւն դուրս ելաւ: Պահ մ'ետքն ծիծմայրն ներս գալով՝

— Տիրուհիս, ըսաւ. ամեն բան լսեցի: Ուրիշ ծիծմայր մը փնտռեցէք. ես վազը կ'մեկնիմ:

— Այդ ալ հոգս չէ, պատասխանեց մայրս: Վ.

ԼՐԱԲԵՐ

ԵՒՐՈՊԱՅի մեծ տէրութեանց գլխաւոր հոգն է իրենց գանձային վիճակը բարւոքել։ Տրոց բարդում և փոխառութիւն եթէ ոչ տնտեսական լաւ միջոցներ, գէթ անհրաժարելի ծախուց դէմն առնելու դիւրին դարմաններ են։ ԳԵՐՄԱՆԻԱ 160 միլիօն մարքի փոխառութիւնն ի կատար կ'հանէ և այդ գումարն երկու կէս անգամ աւելի կ'ստորագրուի՝ իր ազգային ժողովը՝ որ տարիներ առաջ կաթոլիկ կղերին դէմ դրած խիստ օրէնքն հետզհետէ ջնջեց, այս օրերս ժէզուիտներու առջև՝ որ արտաքսուած էին, երկրին դռները կ'բանայ և Դաշնակցային Խորհրդին կ'մնայ վաւերել այդ յետակոչումն։ Արդէն առաջին քայլն դէպ ի Կանոսա Պիզմարք իշխանն առած էր, որ ի Ֆրիտրիխսրուհէ՝ իրեն այցելող բազմաթիւ երեսփոխանաց ճառ մը խօսելով՝ գովեց իր յաջորդին քաղաքականութիւնն, յորդորեց պետութեան եւմտական վիճակը բարւոքել, երկրագործութեան օժանդակել և ընկերհաչտական ձկտումներու դիմադրել, գինուց կատարելագործութիւնն (թերևս Պ. Տուֆ դերձակին նոր գընդարգել զրահին ակնարկելով) առ այժմ իրրև խաղաղութեան գրաւական մը հրատարակելով։ ՖՐԱՆՍԱՅի կառավարութիւնն կ'չարունակէ իր հալածումն ընկերական խռովարարներու դէմ։ Նախագահական հրամանագիր մը կ'պահանջէ օտար երկիրներ պաշտօն վարող ամեն Ֆրանսացի դիւանագէտներէ՝ որ կուզեն ամուսնանալ օտարազգի օրիորդներու հետ, կանխաւ արտօնութիւն ստանալ կառավարութենէ՝ եթէ չեն ուզեր պաշտօնանկ լինիլ։ Ժան տ'Արք սրբոց կարգն անցնելուն ի պատիւ հանդիսաւոր արարողութիւն մը կ'կատարուի ի Նօր-Տամ, բայց այս բարեպաշտական գործողութիւնն չարգիլեր կառավարութիւնն Լիոնի արքեպիսկոպոսին թոշակը դադրեցնել, վասն զի յանդգնած էր հովուական նամակով մը պատուիրել իր թեմերու խորհրդոց որ անսասան եկեղեցական հաշիւներ քաղաքապետին քննութեան ենթարկելու նոր օրինաց։ Ֆրանսա իր պահեստի անբաւ հարստութեան մի նոր նշանը ցոյց կ'տայ Բարիզ քաղքին 200 միլիօն ֆրանքի նոր փոխառութեան առթիւ, 2 1/2 0/0 տոկոսով, 400 ֆրանք պարտատոմսի գնով, 340 ֆր. վճառելի։ Այդ փոխառութեան գումարն 85 անգամ աւելի

կ'ստորագրուի, այնքան մեծ վստահութիւն կ'վայելէ Բարիզի թաղաքապետական վարչութիւնն, որու եկամտացոյցն է մօտ 287 միլիոնի մուտք, և եկքն գրեթէ 280 ½ միլիոն։ ԱՆԳԼԻԱ իր եկամտացոյցին բացը դոցելու համար գլխաւորապէս ոգելից ընպելիներու վրայ նոր տուրք կ'դնէ, նոր մարտանաւերու չինութեան համար ամեն ճոխ կ'տարուի, մինչդեռ լորտ Ռոզպէրի իր դահլիճն ամրապնդելու և Իրլանտական խնդրոյն առթիւ աղատական կուսակցութեան մէջ մտած հերձուածը բառնալու համար իր ճարտարախօս լեզուն և քաղաքագիտական տաղանդը ի գործ կ'դնէ, թէև տարեկուսելի է որ յաջողի, ցորչափ էրինի ինքնօրինական ճիւաղն Բրիտանական միութեան սպառնալիք մը լինելէ չդադրի։ Բայց աղատական պաշտօնէութիւնն ժողովրդեան, մանաւանդ անհող և բանւոր ժողովրդեան, պահանջմանց գոհացում տալու համար հետզհետէ նոր ծրագիրներ կ'պատրաստէ։ Ապդէն Իրլանտայի ագարակներէ արտաքսուած վարձկաններու հատուցում պիտի տրուի, արդէն ներքին գործոց պաշտօնեայ՝ Պ. Ասքիթի ծրագրին համեմատ՝ Կալլէսի (Ուէլս) անգլիական եկեղեցին պետական եկեղեցի լինելէ պիտի դարձի և իր վայելած բոլոր արտօնութիւններէն պիտի մերկուի նոյն երկրին ժողովրդեան մի ծանր դրամական և խղճի բեռը բարձուելով։ Իսկ Խորհրդարանն առաջին անգամ կ'քուէարկէ հանքերու մէջ աշխատութիւնն օրն ութ ժամու վերածելու օրինագիծն՝ հակառակ Պ. Կլատսթօնի դիտողութեանց, որով ապաժամ կ'դտնէ այդ փոփոխութիւնն, իսկ հանքատէրներն՝ յաւին ծայր ընտասարեր և աշխատութեան իրաւանց ներհակ։ Գոպուրի (երբեմն Լուիմպըրկի) դքսին տարեթոշակն որ 10,000 ոսկի է, ջնջելու համար արմատական երեսփոխանաց կողմէ եղած առաջարկն կ'մերժուի ժողովէն իբրև անպատուաբեր Անգլիոյ մոխութեան։ ՈՒԻՍԻՈՅ Ալեքսանդր Գ. կայսրն իր առողջութիւնն լիովին կազդուրելու համար Խրիմ պիտի ուղեւորի։ Զարևիչին նշանուքն Հէսի Ալիս իշխանուհւոյն հետ խաղաղութեան նոր կապ մը կ'համարուի Անգլիոյ, Գերմանիոյ և Ռուսիոյ մէջ, թէև կայսերական խնամութիւններն քաղաքականութեան վրայ կարծուած ներգործութիւնը չունին այժմ։ Ամուսնութիւնն Հոկտեմբեր ամսուն պիտի կատարուի և կ'ըսուի թէ Վիլհելմ կայսրն ներկայ պիտի գտնուի հանդիսին ի Բնդրզպուրկ։ Թէև ԻՏԱԼԻՈՅ կառավարութիւնն՝ իր դրամական անմուկ դրութեան մէջ՝ խնայութեանց սկզբը կ'զգայ և աղա-

տական կուսակցութիւնն կ'առաջարկէ զգալի զեղչեր ընել պետական ծախուց մէջ, սակայն Պ. Քրիսբի կ'պնդէ որ խնայողութիւն ծովային և ցամաքային գործոց մասին տէրութեան համար կրնայ ծանր նստիլ, ուստի ելմտացոյցի վիճաբանութիւնն կ'յետաձգուի մինչև որ գանձուց պաշտօնեայն իր վերջնական ելմտագիրն ներկայէ ժողովին։ ԱԻՍՏՐՕ-ՀՈՒՆԳԱՐԻՈՅ մի քանի կողմերն (Ալսլտ) խռովութիւններ կ'ծագին և գիւղացիք՝ որ ագարակային ներկայ դրութենէ չատ դժգոհ են, հողերու վերաբաշխում, օրոշչէքի յաւելում և աչխատութեան ժամերու նուազում կ'պահանջեն։ Կառավարութիւնը գիւղացւոց դանգատներն նկատողութեան առնելու տրամադիր կ'երևի՝ կարևոր բարեփոխութիւններ ներմուծելով հոլատէրներու և մշակներու յարաբերութեանց մէջ։ ՅՈՒՆԱՍՏԱՆի զանազան կողմերն՝ Բէսարապիա և Թէսալիա, երկրային բուռն ցնցումներ չատ ծանր վնասներ հասուցին ի Թեփէ, Վօլօ, Լարիսսա եւ, որ գրեթէ աւերակ դարձան։ Ցնցումներն զգալի եղան նաև Աթենք և մինչև ցարդ 300 հոգիէն աւելի վլատակներու տակ մնացած և 250 հոգի ծանրապէս վիրաւորուած են։

Ա Յ Լ ԵՒ Ա Յ Լ Ք

Բրիտանական պետութիւնն ծաւալը ու ժողովրդե։ — Նոր հրատարակեալ մարդահամարի մը համեմատ՝ 1891 ին Բրիտանական պետութեան տարածութիւնն է՝ իր բոլոր գաղթ ական երկիրներն մէջն առնելով՝ 11,000,000 քառակուսի մղոն։ իսկ Բրիտանական կղզեաց տարածութիւնն 121,069 քառակուսի մղոն, այսինքն՝ բոլոր Եւրոպայի եօթանասներկուն, Ափրիկէի գրեթէ հարեասորը՝ իսկ երկրագունտի մակերևոյթին մէկ հինգերորդ մասը, պարունակելով 271,827,244 — բնակիչ։

Ալեաց փխ օճառաջուր։ — Արդէն յայտնի է եղի ներգործութիւնն ալեաց վրայ։ Համպուրգի Սթանֆէ անուն շոգենաւուն ապաներն նոր փորձ ըրին մօտերս ալեկոծ ծովն անդորրելու համար։ Սթանֆէն՝ զգալ Ամերիկա ուղևորելու ատեն՝ Ովկիանոս մէջև ծանր փոթորիկի մը կ'հանդիպի։ Սպաներն իսկոյն օճառ կ'նուլեցնեն ջրի մէջ և մեծ քանակութեամբ կ'թափեն նաւուն շուրջն։ Պահ մ'եառք նաւն կ'սկսի առանց դժուարութեան յառաջանալ։ Սպաներն իսկոյն Միացեալ-Նահանգաց Ջրագրական

դիւանին տեղեկագիր մը կ'մատուցանեն նկարագրելով իրենց ուղեւորութեան պարագաներն, փոթորիկն և օճառաջրի ներգործութիւնն ալեաց վրայ։

Լոյս ներչին գործարաններու մէջ.— Մարդկային մարմնոյն ներքին կողմն կամ անոր մի քանի մասերը լուսաւորելու փորձն եղաւ այս օրերս ի Պալդիմոր՝ բժշկական վարժարանի մէջ։ Բրօֆէսէօր Ֆրիտէնվալտ՝ խմեալ դիւրաթեք խողովակի մը միջոցաւ ելեկտրական լապտեր մ'անցուց հիւանդի մը ստամոքսին մէջ. ապա սենեակը մթացուց և 200 հոգի որ ներկայ էին կարող եղան դիտել հիւանդին ներքին գործարաններու գործողութիւնն ի շնորհս այն Բռֆանցիոնեան զոր լոյսը կ'առթէր որովայնին որմին մէջ։

Տաճորդական դրօշիկ.— Միացեալ-Նահանգաց մէջ ծանրութեան և երկայնութեան իրրև չափ սկսած են գործածել քիլօկրամն և կանգունն, ինչպէս կ'գործածուի գրեթէ ամեն Եւրոպական երկիրներու մէջ։ Հաւանական չէ որ Անգլիա աւելի ևս յամառի իր կնճռոտ չափական դրութեան մէջ։ Ամերիկա մօտ ժամանակ պիտի ստիպուի նաև միւս անհեթեթ չափերն՝ տասնորդական դրութեան վերածել։

Ելեկտրական վայրաշարժ.— Հավրի և Պէնզէվիլի երկաթուղւոյն վրայ մի քանի հետաքրքրաշարժ փորձեր եղան մօտերս Պ. Հէյլմանի ելեկտրաշարժ վայրաշարժով։ Ներկայ էին այս փորձերուն անուանի մարդիկ։ Ելեկտրական կառախումբն Պէնզէվիլէն ի Հավր ժամին 80 քիլօմէդը (50 մղոն) ճամբայ կ'առնէր՝ որ սովորական չոգեշարժէն աւելի չէ, իսկ վերադարձին ի Պէնզէվիլ՝ թէև շաւիղն դառ ի վեր, 100 քիլօմէդը կարնց մէկ ժամու մէջ։ Այս փորձերը կ'յուսադրեն հիմնական վոխոխութիւններ բերել արդի չոգեշարժ մեքենայից վիճակին։

Աչաց ցաւ.— Աչքը կ'վնասուի նախ երբ տկար լուսով կարդանք և մեր տեսութիւնն սրելու մտօք չիղերուն չափէն աւելի ոյժ տանք։ Լոյսը տկար է, երբ հեռի, անորոշ, մթին է։ Երկրորդ՝ աչքը կ'վնասուի մարմնոյն առած դիրքէն. երբ հակած կամ երկնցած է, այնպէս որ արիւնը կ'հաւաքուի տեսողական գործարանին մէջ, անբնական ճիգ մը տալու ստիպելով չեղերուն։ Երրորդ՝ վնասն է կառախումբերուն մէջ կարդալու սովորութիւնն. վասն զի չարժումն այնքան յաճախ վոխոխելու կ'ստիպէ դիրք և տեսութեան կէտն, որ աչքը կ'յոգնի։ Տեսողական յոգնութիւնն պանդուխտ հիւանդութեանց գրգիռ կ'լինի, որոց ամենէ ազետալիներն են մաչկացաւ, բրախտ (glaucoma) ակնաքօղ (cataract)։ Աչքի դէմ մեզանչողներն ծերութեան ժամանակ կ'տուժեն, վասն զի ուրիշ դարման չկայ այլ միայն ստէպ լուալ աչերն և մնացած լոյսն պահելու ջանալ։

Ո՞նչ է ելեկտրականութիւնն.— Թերևս լաւագոյն պատասխան մը չկրնար տրուիլ այս հարցման կ'ըսէ Ամերիկեան թերթի մը, քան ինչ որ Կալիլէօ Ֆլորարիս, իտալացի անուանի գիտնականն,

տուաւ, երբ դեռատի կին մ'այդ հարցումն իրեն ուղղեց: Այս եղելութագէտն բացաւ անոր ձեռագիրը տետրակն ու գրեց: — Մաքսվել ցցուց որ լուսաւոր թռթռուններն ուրիշ բան չեն կրնար լինիլ եթէ ոչ եղելութա-մագնիսական այժերու պարբերական թռթռուններ: Հերց փորձով հաստատելով որ լուսոյ մէջցաւ կ'ծաւալին եղելութա-մագնիսական ճօճումներն՝ Մաքսվելի տեսութեան փորձառական հիմ մը տուաւ: Ասոի ծնունդ առաւ այն գաղափարն որ լուսաբեր եթերն և եղելտրական ու մագնիսական այժերու կայանն մի և նոյն բաներն են: Քանի որ այս այսպէս հաստատուած է, կարող եմ այժմ, իմ սիրելի տիկինս, պատասխանել ինձ ըրած հարցդ՝ թէ ի՞նչ է եղելտրականութիւնն: Ոչ միայն այն ահարկու գործակն է որ մերթ ընդ մերթ կ'պատահի և կ'փչրէ մթնոլորտն, սարսափ ազդելով ձեզ իր չանթածիգ որոտումովն, այլ նաև լուսատու գործակն է որ երկինքէն երկիր կ'զրկէ՝ լուսով և ջերմութեամբ գործելու համարքն ու կենաց չունչն: Այն զօրութիւնն է որ արտաքին աշխարհի հետքին առջև սրտիդ բախումներ կ'տայ, այն զօրութիւնն է որ կարող է հոգւոյդ աւանդել ակնարկի մը համայութիւնն և ժպտի մը շնորհը:

Վ. Ս.

ԼՐԱՔԱՂ

Ներսեսեան մէջ ծագած հնամախտը բաւական զոհեր կընէ, և Օսմանեան կառավարութիւնն զանազան զգուշական միջոցներով համնճարակին առաջն առնելու կ'աշխատի:

Սալճ սկսած է ճարակիլ ի կարին, Խարբերդ, Արապկիր, Վան, Մօշ և բարեխնամ կառավարութեան հրամանաւ Ռուսիայէն և այլ կողմերէ ներածուած արմտիքն մաքսային տուրքէ առժամակայ կերպով աղատ պիտի մնան, և միանգամայն ցորենն պիտի ծախուի ամսն գնով երկրագործ ժողովրդեան իրրև սերմնցու:

Արաբաո իր մարտի թիւով կ'հրատարակէ 6—7 ամսուան մէջ Ս. Ջէմիաձին յղուած բարեպաշտական նուէրներն, որոց գումարն կ'հասնի 25,610 ռուպլիի:

Սոյ կաթողիկոսն Ամասիայ Հայ գիւղը կը գտնուի իր հիւանդագին վիճակը դարմանելու համար:

Ս. Հայրապետը մտադիր է զատկական տօներէ ետք Թիֆլիզ գնալ:

Կովկասու բարեգործական ընկերութիւնն ի նպաստ Երևանի և Կարսի կարօտելոց ասացած է Թիֆլիզի դաս մը կանանց կողմէ 1,060 ռուպլի. Փիթոյեան առևտրական տունէն 1,000, Պ. Ա. Ծատուրեանէ 100 և այլ անձանց կողմէ 171—ընդ ամէնն 2271 ռուպլի:

Թիֆլիզի Ներսէսեան Վարժարանի վերաշինութեան խորհուրդն ի գործ դնելու համար նոր յատակագիծ մը կ'շինուի և Ս. Հայրապետին հաստատութեան կ'ներկայուի, սակայն Ս. Հայրապետն առ այժմ չհաստատեր նոր շինութեան յատակագիծը։

Ձիարշաւ — Երկու տարիէ ի վեր դադրած ձիարշաւի սովորութիւնն, այս Զատկի երրորդ օրն տեղի ունեցաւ մեծ ոգեւորութեամբ քաղքիս Պուճա գիւղի մօտ ընդարձակ սրտի մը վրայ, ուսմ. կուսակալն և բազմաթիւ պաշտօնատարներ ներկայ էին այս հանդիսին, ուր դիմած էին հոծ բազմութիւն մը։ Մրցանակներ բաշխուեցան անոնց որ սոյն ձիարշաւին մէջ որոշեալ պայմանները կատարեցին։

Քաղիս Օդէ տը Ֆրանսի այրուձին քարափին վրայ՝ բոլոր ժողովրդեան վրայ՝ իր սոսկալի հետեւանօք, յետին ծայր տխուր տպաւորութիւն մը թողուց։ Գրեթէ 17 հոգի զոհ գացին այս հրդեհին՝ զանոնք ազատելու համար ամէն ճգնունք ի դերեւ ելնելով։

Զատկի առթիւ մի քանի ողորմասէր ազգայինք հետեւեալ նուէրներն բերին Ազգ. վարժարանաց աղքատիկ աշակերտաց։ Ս. Հռիփս. վարժարանի 86 չքաւոր սանուհեաց հագուստի համար՝ ի ձեռն պատ. խնամակալուհի տիկնանց։

Տիկին	Ս. Խիլիքճեան	4	թուփ	չեմ
Մեծ.	Ս. Աւետիքեան	3	»	»
»	Մխ. Վարպետեան	3	»	»
Տիկին	Կ. Արապեան	33	զոյգ	կոշիկ
»	Ղ. Եսայեան	30	»	»

Ս Մեսրոպեան վարժարանի։

Մեծ. Եսայեան եղբարք զգեստեղէն 45 աղքատ աշակերտաց։
» Ս. Աւետիքեան 4 թուփ չեմիօթ։
» Կ. Անտոնեան 4 » տիապլըճօք 41 աշակերտաց համար։

Իզմիրի Ս. Առաջնորդն՝ Գեր. Տ. Վ. Արսլանեան ամսոյս 23 ին գնաց ի Պոլիս ուղեւորեցաւ։ Այս ուղեւորութեան նպատակն այլ ինչ չէ, ինչպես նոյն ինք Գեր. Առաջնորդն հաղորդած է թերթիս խմբագրութեան, եթէ ոչ օգտակարութիւն։ Ս. Առաջնորդն ժամանակէ մ'ի վեր արձնական տկարութեամբ կ'տառապի, հետեւապէս բժշկաց խորհրդով սրժան դատած է մի քանի ամիս մայրաքաղաքը ծնալ իր առողջութիւնը դարմանելու և ապա վերադառնալ իր վիճակն։ Ըստ այս կերպով կ'ջրուին այն խօսքերն իբր թէ Գեր. Առաջնորդն չվերադառնալու պայմանաւ կ'հետանայ քաղքէս և թէ ինք դժգոհութեան պատճառներ ունի։ Ընդ հակառակն՝ Ս. Առաջնորդին յայտարարութեան նայելով՝ ինք շատ գոհ է ժողովրդէն և թէ ակամայ կ'ստիպուի իր հօտէն բաժնուիլ լոկ անձնական գործերու համար, և այդ առժամեայ կերպով։

Դօրտէլեօյի Ազգ. դպրոցին քան և հինգ աղքատ մանկանց, Ս. Զատկի առթիւ, մեյմէկ ձեռք զգեստ նուիրած է Մեծ. Աւետիս Ս. Աւետիքեան։ Այս առթիւ Դօրտէլեօյի թաղական խորհուրդն պարտք կ'համարի հրապարակաւ յայտնել իր խորին շնորհակալիքն։

Հ.

ՆՈՐ ՀԱՐՈՒԱԾ

ԸՆԴՈՒՆՈՒՄ ԿԵՐՊԱՍԻ ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐՈՒ

ԲՈԼԷՄՈՍԻ

(Ο ΠΟΛΕΜΟΣ)

Անցեալ երկուշաբթի Սպրիլ 23 ին սկսեալ անակնկալ մեծ զեղջուկ ամառնային նորաձև կերպասեղէններուս

ԸՆԴԱՐՁԱԿ ՎԱՃԱՌԱՏՄԱՆ ՄԻՋ

ԲՈԼԷՄՈՍԻ մեծ վաճառատունք չատ անգամ կարևոր վաճառահանդէսներ կազմակերպելով ամբողջ քաղաքին հիացում պատճառեցին, բայց իրենց ամբողջութեան մէջ ուրիշ նպատակ չունէին բայց եթէ ձեռքէ հանել հնաձև ապրանքներ և կարօտներ։

Ընդհակառակն այն՝ զոր այսօր հատարակութեան կընծայենք, բացառիկ մտանատոր հանգամանք մ'ունի. չէ՛ թէ ձեռքէ կը հանենք, այլ ի վաճառ կը դնենք նորաձևութեան յատուկ զանազան ապրանքներ, որք կը հանենք, այլ ի վաճառ կը դնենք նորաձևութեան յատուկ զանազան ապրանքներ որք կը վերաբերին ամառնային արդի եղանակին, կանանց, երիկ մարդոց և տղայոց համար արդուզարդի և զգեստի նիւթեր՝ ամէն մասամբ անհաւեմատ ընտրութեամբ և ըստ Եւրոպական վերջին նորաձևութեան։

ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ ԱՅԺԱՆ ԴԻՆԵՐՈՎ

Վաղեցէ՛ք ԲՈԼԷՄՈՍԻ վաճառատուններն ձեր ամառնային դնումներն ընելու այնպիսի գիներով որք դրեթէ ձրի են։

Յ. Մ. ԳՕՆՏՈՒԼԻՍ ԵՒ ԸՆԿ.



ՄԹՐՆՑ· ԿԱՐԻ ՄԵՔԵՆԱՆԵՐՈՒ

Ն. Ժ. ԲԱՔԱՐԱՔԻ ԵԻ ԸՆԿ·

Ֆրէնչ· ըառ 91 — Շիլեֆինոյ 34

Ղ.ռնաֆ, Ռեվեր–Ալ[illegible] 32|34

Մարդ կրնայ ամեն տեսակ կարի մեքենաներու տեր լինել, ՄԻՄԻԱՅՆ շաբաթական 1|2 մեձիտ վճարելով։

Կօշկակարներու, դերձակներու և ճերմկեղէնի կարուհիներու համար՝ կարի մեքենաներու նոր ախ[illegible]ը ամենէ տոկուն, ամենէ արագ, ամենէ դիւրին և առանց ձայնի է։

Մեր վաճառատանէն ծախուած ամէն մեքենայ ԵՐԱՇԽԱ–ԻՐԵԱԼ է։

Մեր ամէն յաձախորդներուն ՋՐի դաստատութիւնն և մեքենաներու նորոգութիւնն։

Ամէն տեսակ մեքենաներու նորոգութիւն։

Ասեղ, դերձան, իւղ չափաւոր գներով։

Համոզուելու համար ԱՆԳԱՄ ՄԸ ՄԻԱՅՆ այցելել պէտք է։

ՎՃԱՐՈՒՄՆԵՐՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԻՋՄԻՐի համար — Արժէքին կէսը կանխիկ և միւս կէսը երեք ամսէն։

ԻՋՄԻՐԼ ԴՈՒՐՍ — կանխիկ։

Ամեն անոնք կ'փափաքին հաստատուն և ձաչակաւոր ու միանգամայն խիստ չափաւոր գիներով՝ կազմեալ գրքեր ունենալ թող դիմեն, 1857է իվեր հաստատեալ, Էվանկէլիքեան Ցուցադպրոցին անցքին մէջ թիւ 8

տե. ՍՓԱՆԱՍ ԱՆԿԷԼԻՏԻՍ

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԴԵՂԱՐԱՆ

ՋԱՐԵՀ ՇՆՈՐՀԱԻՈՐ

Հայոց ըառ, Բեշիկթէ Ճապրե

Ամեն տեսակ դեղերու մեծ խնամքով պատրաստութիւն
Չափաւոր գիներ

Գաւառներէ եկած հիւանդներու ամեն դիւրութիւն կը տրուի, իրենց հիւանդութեանց տեսակին յարմար բժիշկներ կը ներկայացուին և անոնց պէտք եղած դեղերը մինչև իսկ գաւառներն կը պրպտին։

Պատիւ ունիմ ծանուցանել Արդյ հասարակութեան թէ՝ ամիսկան կերպով կը դարմանեմ ակռայի ամենէ անտանելի ցաւերը։ Ակռաներու փտած մասերը կը լեցնեմ փտութիւնը ինչ վիճակի մէջ որ ալ ըլլայ, ջղերուն անզգայութիւն տալու համար մի քանի անգամ միայն դարմանելով։ Ցաւած ակռան ապագային ոչ պիտի ցաւի, ոչ պիտի մաշի և ոչ պիտի լթափի։

Այն անձինք որ քանիցս կեղծ ակռաներ չինել տուած են և միշտ դժգոհ մնացած, թող հաճին անգամ մը ինձ դիմել և ես պատրաստ եմ մինչև իսկ ՄԱՇԱՅ ու անկոր լինաերու վրայ զետեղել ակռաներու ամբողջ շարեր և կամ անջատ ակռաներ, առանց դիմելու թելերու յորինեցուցիչ գործածութեան։

Նոր դրութեամբ կը հաստատեմ ակռաներու ամբողջ շարեր անգլիական քաւչուքի վրայ։ Այս դրութեամբ քիմքին իր ՁԱՇԱԿը և լեզուն իր ԱՐՏԱՍԱՆՈՒԹԵԱՆ ԿՈՐՈՎՆ ու ՆՐՈՒԹԻՒՆը ՄԻՇՏ կը պահեն։

Փտած ակռաներու արմատներն անվնասական կերպով և առանց ցաւ պատճառելու կը հանեմ։

Փափաքողք կրնան դիմել Պամպանէ փողոց, Թիւ 120, 8-12 կ. Ա. և 1-7 կ. Ե.

ՏԻԳՐԱՆ ՏԻՐԱՑՈՒԵԱՆ

ԿՎՈՂՆԻ — ԳՎԵ ԴՎՇՅՈՂ

ժօհցեռոմՎ	«	8
ժՂյռՐ	«	Լ
ռվովմՐ	ցօմռՂԴ	9

Ղռոդբյռցրոմռղ ղռիռվիՂՐՊ յովպի ՃԻ կռոՃնգռ գվմօ ՃԻօ տՃվր Իռմս ՝յռղռտռօ կ ՃոՀնղռԿ ԽմռՃեռմգիռտռո իֆռտռՐ ռռմգղիկրքմղն « վՃԻՈՒ ՃԿվ–վՈՃ–Ս ՇՆՏ » ՆռռսկռմռռտռմՒԿ զօռղօվ ևմգղռռռռՃեռԿ մռռտկԻՈՇՐ կռոռզռ գգրռ մռրռԿ ճշռմռ ԴչՃՒվՈՃ–ղռիռվիՂՐՊ ղռռմ յռցռռվմռտռո ՃԻ Հվ զռոբվկռվռռտՒ ՀՈՃ –ՄՊ ո ռռսմգղՂնմռվջռՑ ·տռռ ՂղղռճՒռղռջ յովզռ ռվռտռ

ՀՇռՃ ՃռՃՃկռջՃռՇՀՃ ՝Ղռմ ՀղՀՇ ՝զռմ ՃռՃՇ պՐռՈ Օ

ԳՈԳՈՂՀՈՎԺՈ ՈՍՆՕՃ

ՄԵՔ ՆՊԱՐԱՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Դ. եւ Լ. ՃԷՐԻՏՃԵԱՆ

Հայոց Ձեռ Ընաղ

Մեր վաճառատան մէջ կը գտնուի անպակաս ամէն տեսակ պարէն, ինչպես՝ ալիւր, բրինձ, արդար եղ, շաքար, խաշուկ, ձէթ, մաքարօնի, ապուրի համար խմորեղէններ, պանիր, պիսքուիթներ, անուշեղէններ, գինի, քօնեակ, և այլն, և այլն և ամէն ինչ որոց պէտքը ղգայի կ՝ ամէն տան և մանաւանդ բարբար խոհանոցի մէջ։

Խիստ ժամն և ամէն մրցում մրհամարհող գիներ։

ԼԱ ՖՐԱՆՔՖՕՐԹՈՒԱԶ

(LA FRANCFORTOISE)

ԾՈՎԱՑԻՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՓՐԱՆԿՖՕՐԹ

Դրամագլուխ ֆր. **6,250,000** Պահեստի դրամ **1,270,312** ֆր.

Ընկերութիւնս կ'ապահովագրէ շոգենաւով ուղարկելի ամեն տպրանք, ինչպէս և դրամածրար, ևայլն դիւրամատչելի պայմաններով։

Գնոց և այլ ամեն տեղեկութեանց համար կը հրաւիրուին դիմել առ ընդհանուր գործակալն Զմիւռնիոյ և շրջակայից

ՅԱԿՈԲ Գ. ՎԷՄԵԱՆ

Պ. ՅՈՎՍԷՓԵԱՆ

ԳՈՐԾԱՏՈՒՆ

Հայոց ճեմ փողոցը, Բեշիկթէշ ծադրէն, ԹԻ 106

Սոյն տեղական գործատունս, որուորդաց վերաբերեալ կաշիէ, ձգախչիճ և թէ՛ լաթէ ամեն տեսակ պէտքերու լաւագոյնը շինելու պատրաստ ունի։ ամենատաղնիւ որսորդ մը իր քմահաճոյքը հասնիմատ ու և է խնդրանքի մը անմիջական պատրաստութեամբը մեծ դիւրութիւն պիտի գտնէ։ Գաւառացիներէ ու և է խնդրանք կամ յանձնակ ամենայն ճշդութեամբ կը դրկուի։ Ներ ձեռաց արտադրութիւնը ըլլալով ունինք նաև ճամբորդաց մեծ ու փոքր անուշկներ, կանանց, դպրոցականաց, փաստաբանաց, դրադրաց, բալաներաց, ծիծմպրերու զանազան պէտքաւորները, դրամի և սիկարէթի դրամանակներ, թղթապանակ, զանազան գօտիներ, կապերտ պէտքաւորներ, և այլն, և այլն։

Ցոյս մեծ ուսիմ ըլլ, Տարգիի Ազգայինս՝ հայ գործատուն մը հաջողութեան ազնիւ զգացմամբ՝ իրենց պատուանիշն մեզմէ գոհացնելու պիտի բարեհաճին։

Վ. ՍԻՏԻ — V. SIDI

Մեծ կազմատուն Բարիզեան և Անգլիական ճաշակով։

Ամենաընտիր կազմ, Նուագատետրներու և Տումարներու

ԽԻՍՏ ԶԱՓԱՒՈՐ ԳԻՆԵՐ

17, Պարպարեսթ խան, Ցրտնկայ ներք

ՅԻՇԱՏԱԿԱՑ ԴԱՂԻՆՆԵՐ. փունջ առաջին. ՌՈՒԲԵՆ ՊԵԼԵՄԱՆ. Կիզրոնատեղի Յակոբ Է Յ. իպրանեան գրավաճառ և Ջրավաճառ Կ. Պոլիս Կիսիկ — փաշայ, գին 5 դահեկան. գտանուն ըրաբութենանց փոխան նամակագրելմ ևս կընդունուի. փունջ երկրորդ ընդ հրատարակելի.

ՆՐԱԽԱՏԻՐՔ, բանաստեղծական և թատերական արձակ և տպագրուելոյ գրուածոց — Գրեց Գ. Մ ԷՕԼՄԷՋԵԱՆ, հրատարակիչ Պ Պալանց Կ. Պոլիս. Ջաքմաքճլար, թիւ 20. Բաժանորդագին 5 ղրշ. Հետ տպագրութենան 7 30.

ՆՈՐ ՔԵՐԱՒԱՆ ՖՐԱՆՍԵՐԷՆԻ, յորմէ ելք Օր. ԵԱՓԻՆԻՒ ՀԱԼԷՊԼԵԱՆ, ի պետս ազգային վարժարանաց. Գին 2 ղրշ. տպագր. Պատտատեան, Կ՚Գրանատեղին Սմիւռնա Պաւթեան, Գալաթիա Խան, Պանկ-Բաճա, Կ Պոլիս.

ԳՐԱՑՈՒՅԱԿ ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆՑ կազմեց Վ.Ա.ՀԱՆ Գ. ՋԱՐԴԱՐԵԱՆ Ա. Տարի 1893, Գին 10 ղրշ. հրատարակած է Յունվարի առտին և պատկերազարդ, Տարուան բաժանորդագրութիւնն է, 10 ղրշ. փոստն ծախքով 12։ Հատ 1 ղրշ. իսկ վարժարանաց և Գրավաճառաց ձրի կը տրուի.

Գրպանի բառարան ՀԱՅ-ՖՐԱՆՍԵՐԷՆ (25000 բառ) և ՏՆՏԻԿ-ՁԻՊԱՇԵԱՆԻ հրատարակիչ Ջարեհ Թորոսեան. Տպագր. Յ. Մատթէոսեան — Գին պարզ 15, լաթապաղմ 17 1/2, կիսակաշի 20.

ԲԱՌԱՐԱՆ ԱՆԴՊԻԵՐԷՆԷ Ի ՀԱՅ յորմէ վ. Յ ՅԱՒՈՒԼԵԱՆ. Ամբողջ գործը փոխանակ 35ի որ խոստացուած էր 45-47 թերթ պիտի լինի, Բաժանորդագինն է պարզ կազմ 30 ղրշ. լաթ 35, կիսակաշի 40, Օտար երկրաց համար 7 և 8 ֆր. լրանալէ յետոյ 40, 45 և 50 փոստին ծախքը գնողին վրայ լինելով, Փոփոխութիւն պարտին դիմել հրատարակչին, Ջ. Թորոսեանի Գալա, Պանճէ-Գուբա, նոր բաստէն գէմ, թիւ 4, ուր է մնակ կեդրոնատեղին, Ա. Թերթն ձրի երբ նմոյշ կը տրուի. Հրատարակուած է 3-րդ թերթն. Բաժանորդագրութիւնն ի մէջ կը փոխի 40-ր թերթը հրատարակելէ.

Ընդունք որ ի՛փախարին երեսնց երկիրն թերթիս մէջ Ծանուցուած տեղեակ, կ՚ինդրուին որ երկերկու օրինակ խմբագրութեանս հասցնեն.

ԱԶԴ

Ան բաժանորդներն որ Ա. ՄԱՄԼՅԱՆ թիւերն ժամանակին կամ բնաւ չեն առած, կ՚ինդրուի որ հասնին անմիջապէս խմբագրութեան. Հակառակ պարագային, ոչ և է պատգամ անընդունելի ու անկ և իր ուշացի նկատուելու.

ՄԵԾ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ ԴՐԱՄԱԳԼԽՈՑ

Օրինակս երաշխաւոր արիւնէ բարձր կամ տալարտ թիւնէ ի ՀԱՄՊՈՒՐԿ

500,000

Մարդ կամ

ՏՐԱՆՔ **625,000**

Երբ ժամադրեալ գաժին պիտի ըն տրուին տասնէ երջանիկ չորսերը նոր ժամ վիճակահանութեան դրամագլուխ, Համպուրկի կառավարութիւնը հետեւեալ

Բոլոր ու և է պարագայի մէջ

1	Պարգեւ մեծ	300 000
1	Գաժին, մարդ	200 000
1	» »	100 000
2	» »	75 000
1	» »	70 000
1	» »	65 000
1	» »	60 000
1	» »	55 000
2	» »	50 000
1	» »	40 000
5	» »	20 000
3	» »	15 000
26	» »	10 000
56	» »	5 000
105	» »	3 000
253	» »	2 000
6	» »	1 500
756	» »	1 000
1237	» »	500
33950	» »	148
8931	Բոնուս մարդ	300, 200, 150 127, 100, 94, 67, 40, 29

Պրամագլխոց ամէնէ կարեւոր վիճակահանութիւնն էր պարբերի գարձր կառավարութիւնէ արտօնեալ և Պետութեան ամբողջ կալուածոց երաշխաւորեալ կը պարունակէ 110,000 տոմսակ, որոց 55,400 ապահովագրեալ պիտի չահին, ասոր վճարման ձեւ գրամագլխոյն պիտի

12,000,000

ՖՐԱՆՔ ՈՍԿի

Այս դրամական վիճակահանութեան նպատակը կազդարարելի ին պետական կամուրջ և որ սորա նշանակուած ամսան 55400 գիներն ապահովագրեալ պիտի որոշուին 7 մեծ Երգ տարուան դասակարգի մէջ։

Առաջին դասակարգի գիտուր գաժին է 20,000 մարդ, երկրորդ կարգինը 55,000 մարդ, որ երրորդին կ'ըստ բարձրանայ 60,000 մարդի, չորրորդին 65,000 մարդ, հինգերորդին 70,000 մարդ, վեցերորդին 75,000 մարդ, և եօթերորդին 300,000, 200,000 մարդ ու և է պարագայի մէջ 300,000, 200,000 մարդ ևայլն։

Սորա վիճակահանութեան տասնը չորդ անգ կը հրատարակէ այն գործը մանանակիչ այս վեճագրամար վերաբերութեան։

Այն անձինք որ կը փափաքին դրուիլ կը հիմնարկին որ հինգ բնարան տասնակներուն գործիներէն յետոյ Գրամատան գրատեսականներով, կամ Լաբորատորի գրամատան, կամ տեսչի գիտերին պետի լինին յղել սորան միջոցով բդրատարարական հրամանագրան հրատարակեալ թղթատան թղթով։

Առաջին կարգի վիճակահանութեան գինն է

1 տոմսակ ամբողջ նախնական	ֆր	7,50
1 կիսատոմսակ նախնական	»	3,75
1 չորրորդ տոմսակ նախնական	»	1,90

Հետեւեալ կարգերու տոմսակոյ գինն ինչպես նոյն ինն գիներու բարձրանի և վիճակահանութեան թղթատոմսերն, միջոցաւ ասոր մանր տոհմութիւններէն կարելի է դանել պաշտօնական յայտագրին մէջ։

Ամէն ոք պետի ընդունի նախնական տոմսակները պետական դրամով ինչպես նաև վիճակահանութեան պատասխանական յայտագիրը, որու մէջ կ'գրելի տասն կարեւոր համարձակութիւնը վիճակահանութեան անմիջապես ետք տասն չահած պետի ընդունելը գաշտած պարգեւները պատասխան ընդունելու դրամով։ Քաժիններ պատրաստին համաձայն շուտով պետի վճարելի պետական երաշխաւորութեամբ, գիներ վճարելի նաև Ամբողջական մարմով։ Ամէն հետաքրքրութեան նպատակ եթէ երջանիկ վիճակահանութեան յայտագիրն չահած գիներ անդարձելի պատրաստ ենք վիճակահանութեան ետք անդարձ գումարած տոմսակներն եւ տասնակ և գիներ գումարը հատ ցանկ։ փոփոխութիւն կարող ընդհատ յղել վիճակահանութեան պաշտօնական յայտագրին ձրիապես ի տղեկ ինձեն կ'պատրաստ որ գրամագլխոյն Տասն կարելի եղածին չափ շուտով գրկի։ Եւ երբեք գրամատներն ըստ ու և է պարագայի մէջ նոր

25 Մայիս **1894** Ն. Տ.

ՎԱԼԱՆԳԻՆ ԵՒ ԸՆԿԵՐ

Գրամատուն ՀԱՄՊՈՒՐԿ

Ընդ հաշիւ, Գերմանիա

Hon. Rédaction